№ 7 (108) X ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 1900

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ

A.R.F. BURO LIBRARY

ՈՃՐԱԳՈՐԾԸ ԳԱՀԻ ՎՐԱՅ

Et ton nom paraîtra, dans la race future,
Aux plus cruels tyrans une cruelle injure !

RACINE.

Եղբօր մարմինը պատանդան դարձրեց նա։ Եւ այդ մեծ պատանդանի վրայ կանգնած՝ 25 տարի է, հրապարակով, ամբողջ աշխարհի առաջ, նա երկրպագում է իր միակ Աստծուն — ոճիրին։ Ոճիրը նրա Աստուածն է, նրա Մարգարէն, նրա Ղուրանը։

Եւ այդ Ղուրանը ասում է՝ „Եղբօր դաւաղը որդուն չի խնայի"։ Ու մի օր, երբ գաղտնի սենեակից պարսպապատ այգին փոխադրուած՝ դողը մարմնի մէջ արիւնացող ծաղիկների բուրմունքն էր շնչում, նոր սարսուռ պատեց նրան. — ծառերի յետևից, ինչպէս գետնից բուսած, դուրս եկաւ մի մանուկ — ո՜հ, որքան նման էր Մուրադին — աներկիւղ, ակնապիշ, աչքերը հօր աչքերին գցած։ Հայրը որդուն էլ չճանաչեց. — մանկան թաթիկը նրան ատրճանակ թւաց, իսկ ժպիտը՝ սպառնալիք, դաւադրութեան նոր փորձ։ Ատրճանակը որոտաց։ Ոճրագործի նոր զոհը՝ հարազատ զաւակն էր, 10 տարեկան։ Արցունք չերևաց արիւնով լեցուած աչքերում։ Մի բան միայն հրամայեց՝ „Շո՛ւտ, հողի տակով արէք", շուտ եկաւ գնաց, որպէս զի միւս օրը գայ և նոր զբօսանք կատարի որդու դիակը ծածկող անխօս հողի վրայ...

Բայց տեսնւած է միթէ, որ որդուն չխնայողը՝ կնոջը կամ ազգականներին խնայի։ Եւ սուլթանական գաղտնի զբօսավայրերում, տարիների շարքերի հետ՝ դիակների նոր շարքեր կազմեցին...

Ոճրագործ՝ իբրև եղբայր, ոճրագործ՝ իբրև հայր, ոճրագործ՝ իբրև ամուսին։

Ընտանիք չէ դա, այլ ընտանեկան սպանդանոց։

—

Բայց ընտանիքը նեղ էր, մարդիկը քիչ, արիւնը պակաս։ Իսկ նրա աչքերը արիւնով լեցուած, արիւն էին որոնում, անյագ, անվերջ։ Եւ ահա Նըլդըզ Քէօշքի անթիւ սենեակների մէջ, միացած ստորերկրեայ անցքերով և գաղտնի գաւիթներով, բայց անջատուած Բոսֆորի գեղանկար վայրերից անթափանցելի պատերով, կազմուեց նոր սպանդանոց — սպանդանոց պալատականների, փաշաների, մինիստրների, նոյնիսկ կանանց և ներքինիների... Դերերն ու բախտը, պատիւն ու պատիժը փոխուում էին ինչպէս կայծակ, նոյնքան տրագ, որքան ոճրագործի երկիւղն ու յոյսը, ժպիտն ու զայրոյթը, — երեկուայ ներքինին այսօր մինիստր էր, այսօրուայ մինիստրը՝ վաղը հալածական, միւս օրը դահիճ, նորից թշնամի, նորից բարեկամ, նորից „դաւադիր"... Արեան հոտը բռնեց ամբողջ պալատը. անկիւն չմնաց անարատ, սենեակ չմնաց անարիւն։ Եւ հեղեղի արագութեամբ կերպարանափոխուող այդ քաղաքական սպանդանոցի մէջ, ուր 25 տարուց ի վեր կատարւում են այն բոլոր սարսափները, որ հնարել են բոլոր ժամանակների թագակիր գլուխները՝ իրենց „ստեղծագործութեան" առաջին օրից մինչև այսօր, մի մարդ միայն մնաց անփոփոխ, հաստատուն, անսասան և նոյնիսկ անկուշտ. — Համիդն է դա։

Ոճրագործ՝ իբրև բարեկամ, ոճրագործ՝ իբրև մտերիմ, ոճրագործ՝ իբրև պալատական։

Պալատ չէ դա, այլ պալատական սպանդանոց։

—

Սակայն պալատն էլ նեղ եկաւ նրան։

Պալատից դուրս, ո՜հ, որպիսի անտանելի տարածութիւն, և որքա՜ն առատ նիւթ ոճիրի համար։ Մոնգոլական ցեղի գրոհը, 500 տարուց ի վեր — ամ՜թ եւրոպային — սուլթանական ճանկերումն է թողել քաղաքակրթութեան հրաշալի երկիրներ, — բիւզանդական կուլտուրայի օրրանը, սիրուն Փոքր-Ասիան Հայաստանով, ուր բիբլիական բանաստեղծութիւնը ղետեղեց աննման Եդեմը, քրիստոնէական վարդապետութեան մեծ հիմնադրի բազմատանջ հայրենիքը, գեղեցիկ Բալկանը՝ կենսունակ ազգերի բազմաթիւ յաջորդներով, վերջապէս Մահմէտի կրօնի առաստղական օջախները, — որպէս զի Եըլդըզ Քէօշքը ոչնչացնի այն բոլորը, ինչ ստեղծել է պատմական հանճարը, և դարձնի այդ բոլոր երկիրները մի սպանդանոց։ Միթէ հարկաւոր էին կամ պակաս էին „պատրուակները". — մի օր քրիստոնեաների դաւ, մի ուրիշ օր սոֆթաների դաւադրութիւն. մի տեղ կրոտական ապստամբութիւն, մի այլ տեղ արաբների շարժում. կամ ահա վերջապէս յեղափոխական բոլգարներ, ժէօն-Թիւրքեր, ապստամբ հայեր... Արիւնը սկսեց հոսել գետի նման, աւերմունք, կոտորած, թալան, գաղթ և իբրև ապօթէօզ այդ բոլորի՝ հայկական կոտորածը, համաշխարհային ողբերգութեան այդ գերբնական տեսարանը...

Ոճրագործ՝ իբրև կրօնի ներկայացուցիչ, ոճրագործ՝ իբրև ազգերի կառավարիչ, ոճրագործ՝ իբրև պետութեան գլուխ։

Պետութիւն չէ դա, այլ պետական ս պ ա ն դ ա ն ո ց։

—

Ահա և վարձատրութիւնը — մի ք ս ա ն հ ի ն գ ա մ ե ա կ։ Գահի վրայ բազմած է նա, պճնուած, կորած ոսկու և ադամանդների մէջ, յաղթական։ Նայում է իր պատուանդանի բարձրութիւնից այն բազմութեան, բազմացեղ, բազմալեզու, բազմատարագ, որ շնորհաւորութեան է եկել, և հպարտութեան փայլը սաւառնում է նրա խորշոմած ճակատին։ „Ահա իմ յաղթանակը“։ Եւ այդ շ ն ո ր հ ա ւ ո ր ո ղ բազմութեան առաջին շարքերում կանգնած են ոչ թէ ս տ ր ո ւ կ հ պ ա տ ա կ ն ե ր ի պարտադիր պատգամաւորները, — ի՞նչ արժէ ստրկի շնորհաւորութիւնը, — այլ ա զ ա տ Եւրօպայի գահակալների լիազօրները, շողքորթ ժպիտները երեսին, մէջքը կորացրած, սպասողական...

Կ ե ց ց է մ ի ա պ ե տ ը...

Կ ե ց ց է ո ճ ր ա գ ո ր ծ ը...

Թագերի տօն է դա. նենգ, վտանգաւոր մի տօն, որ միացնում է բոլոր թագակիրներին, իբրև նոյն „ընտանիքի“ որդոց, իբրև նոյն շ ա հ ե ր ի մարդոց։ Եւ որքան վտանգաւոր է դառնում ժողովրդական կրծքի վրայ սնուող յեղափոխական վիշապը, նոյնքան սերտ կերպարանք է ստանում հակառակ ուժը — գ ա հ ի իշխանութիւնը։ Այլ կերպ ի՞նչպէս բացատրել այն հ ա մ ա շ խ ա ր հ ա յ ի ն անամօթութիւնը, երբ ամէն կողմից պ ա շ տ օ ն ա կ ա ն շնորհաւորութիւններ են թափւում այն գահի առաջ, որի ոտները դրուած են անթիւ գանգերի վրայ. շնորհաւորութիւններ այն պալատում, ուր խմբագրւած են ամբողջ ազգերի ոչնչացման ծրագիրներ, այն սենեակներում, ուր մի անկիւն չէ մնացել առանց արեան, առանց եղեռնագործութեան, առանց ոճիրի...

Հռոմը ունեցաւ իր Ներօնը, Իտալիան իր Ցեզար Բօրջիա, Արևելքը իր Զինգիզխանը, բայց և ոչ մէկը դրանցից չ՝երաղեց տօնել ոճիրը, կամաւոր շնորհաւորութիւններ մատուցանել ոճրագործներին։ Եւ ահա նոր, քաղաքակիրթ գահերն են, որոնք հրապարակով, շքանշանազարդ լիազօրներով ողջոյններ են ասում այն մարդուն, որ իր վտիտ մարմնի և անճոռնի դէմքի տակ միացնում է երեք ամենախոշոր հրէշներ՝ Բօրջիա, Ներօն, Զինգիզխան, — Բօրջիա՝ ընտանիքի մէջ, Ներօն՝ պալատում, Զինգիզխան՝ պետութեան մէջ։ Ողջոյններ և 25-ամեայ շնորհաւորութիւններ այն մարդուն, որի գործերը մոռացնել տուին պատմական ամենախոշոր չարագործներին, և որի անունը՝ Համիդ՝ ապագայ բ ա ռ ա ր ա ն ն ե ր ի մէջ ուրիշ բան չէ նշանակի, բայց եթէ ոճիր, արիւն, կոտորած...

Ոճրագործութեան սրբագործումն է դա...

—

Սակայն չարիքը միմիայն „կատարւած փաստը“ չէ, այլ և այն լրբացնող, այլասերող օրինակը, որ նա պիտի տայ յաջորդներին, ապագային... „Տեսէք, նա սպանեց, նա կողոպտեց, նա քանդեց, բայց մնաց անպատիժ, յարգւած, տօնւած, մեռաւ հանգիստ իր անկողնի մէջ, արժանի լինելու իբրև օ ր ի ն ա կ իր յաջորդներին, սուլթանական գահի գալիք պետերին“։ Եւ մեղաւոր կը լինեն մի՞թէ „յաջորդները“, եթէ սիրտ առած, խրախուսւած, լրբացած այդ համոզիչ օրինակից, շարունակեն աւերել, կոտորել, շարունակեն ոճիրին երկրպագել, ոճիրը աստուածացնել, համոզւած, որ այդ բոլորի համար իրենց սպասում է ոչ թէ հերոսի վրիժառու դաշոյնը, այլ հանգիստ մահ՝ ալքայական անկողնի մէջ, պսակւած թագակիրների շնորհաւորութիւններով, թանկագին ընծաներով...

Եթէ հոգեբան-սոցիօլոգը կարողանում է պ ա տ ճ ա ռ ա բ ա ն ե լ, մեկնութիւն տալ հոգեկան այն վարդման, որ մահաւան ենթարկեց մի Ալեքսանդր II, մի Նասրէդդին, մի Հումբերտօ, մեթէ արեգակի տակ կը գտնուի մի հատ մ ա ր դ, որ վատաբանէր այն ձեռքը, որ կը բարձրանայ 25 տարուայ ոճրագործի վրայ, իբրև բնական արտայայտութիւն բազմատանջ ազգերի ցասման ու վրէժի։ Չէ՛. մ ա ր դ ը դեռ այնքան չէ ապականւած։ Ընդհակառակը։ Վրէժի այդ արդարադատ հ ա ր ւ ա ծ ը բերկրութեան լիաբերան աղաղակ կը խլէ ոչ միայն ստրկացած ազգերի ճնշւած կրծքից, որոնք յոգնեցին զոհեր տալով, կամ քաղաքակիրթ աշխարհի բոլոր անկիւններից, ուր նոյնպէս յոգնեցին զոհերի լուրերը առնելով, այլ նա ա ն ե ր և ո յ թ. թեթևութիւն կը պատճառի և այն վեհապետներին, որոնք պարտք համարեցին շնորհաւորել թագակիր-ոճրագործին։ Հաւատացէք. բացառութիւն չի կազմի նոյնիսկ Վիլհելմը, գերմանական անունը արատաւորող այդ թագակիր-դեկադենտը...

Դաշոյնը շատ հ ա մ ո զ ո ւ մ ն ե ր ը է փոխել...

—

Վրէժ...

Դատարկ, մեռած բառ է դա, թեթև մի խօսք, ստեղծւած սիրոյ պատմութիւնների համար, թէ դեռ նա մնում է իբրև մարդկային զգացմունքների արտայայտութեան ամենախոշոր հնչիւններից մէկը, ուր այնքա՛ն ներդաշնակ և այնքա՛ն ուժգին ամփոփւած է երկու գաղափար՝ ա ր դ ա ր ո ւ թ ի ւ ն և հ ե ր ո ս ո ւ թ ի ւ ն... Եւ ո՞վ պիտի լինի այդ ա ր դ ա ր ո ւ թ ե ա ն գործադրողը, այդ հ ե ր ո ս ո ւ թ ե ա ն հեղինակը։ Մի պալատական, մի նախկին մինիստր, նախկին ֆավորի՞տ, թէ ոտնահար ժողովրդի սրտից ելած՝ նրա ցաւով դարբնւած, նրա սիրով կրակւած մի խ ե ն թ, մի ֆ ա ն ա տ ի կ ո ս, մի ա ն տ ո ւ ն... Տանջանքը ժողովուրդը կրեց, տանջողն պատժողն էլ պէտք է ժողովրդից դուրս գայ։ Մեզ հարկաւոր են ժ ո ղ ո վ ր դ ա կ ա ն Բրուտոսներ։ Դրա մէջ է հ ա տ ո ւ ց մ ա ն կ ր թ ի չ գաղափարը...

Վըէժ, վըէժ...

Վըէժ այն գերեզմանոցի համար, որ Հայաստան է կոչւում, վըէժ այն դժոխքի համար, որ Մակեդոնիա անունն է կրում, վըէժ այն սպանդանոցի համար, որի ճակատին կպցրած է Թիւրքիա։ 25 տարի է արիւնը հոսում է սուլթանական գահի տակ, թող միանգամ էլ, և գուցէ վերջին անգամ հոսի այդ գահի վրայ։ 25 տարի է սպանութեան հրամանը գալիս է այդ գահից. թող մի անգամ էլ գնայ դէպի գահը...

Վըէժ, վըէժ, վըէժ...

Դա է նահատակների միակ կտակը, կտակ սրբազան և պարտադիր, գրուած կոյսերի յօշոտած մորթի վրայ, թօթովախօս մանուկների անմեղ արիւնով...

ՄՈԼՈՐԵՑՆՈՂՆԵՐ

Ազգերին թէ անհատներին վրայ հասած ջախջախիչ, անխուսափելի չարիքի առաջ՝ սովորաբար հեռու չմտածող տափակ գլուխների մէջ առաջ է գալիս մտքերի մի ողբալի խառնակութիւն, մի չտեսնուած ժխոր, երբ սարսափահար մարդն ամէն ինչ անում է իր կորուստը փութացնելու և ոչինչ, կամ համարեա ոչինչ՝ շուտափոյթ փրկութեան մի ելք մտածելու։ Որքան մեծ է յանկարծահաս չարիքը, որքան տարերային է նրա առաջին թափը, նոյնքան աւելի մեծ է լինում մտավախների բազմութիւնը, նոյնքան աւելի ծանր նրանց մտքերի շփոթն ու բանգագուշանքները։ Խելքերի այլանդակութեան այս վտանգաւոր շրջանում, երբեմն մարդիկ կարող են, օրինակ, մի սոսկալի հրդեհի առաջ ձեռները ծալել կանգնել անգործ և նզովել այն լեռը, որտեղից փչում է կրակը բորբոքող քամին, կամ աւերիչ հեղեղի ժամանակ կը նզովեն այն ձորը, որ կատաղի տարերքին իրեւ հեղեղատ ծառայեց։ Ինչո՞ւ զարմանալ. անասնական, հօտային մի բան կայ, որ չնայելով դարաւոր փորձառութեանը և քննող բանականութեանը՝ շարունակում է ապրել մարդու մէջ, — դա մեծ վտանգի ժամանակ ինքնագիտակցութեան լեթարգիան է, ինքնապաշտպանութեան բնազդի անօրինակ մոլորութիւնը։

Նէիրական՝ բայց և դրա հետ միասին ծանր, չափազանց ծանր է այն մարդկանց պարտքը, որոնք մի վսեմ ինքնամոռացութեամբ յանձն են առնում սարսափից անզգայացած, շշկլած բազմութեան ձեռքից բռնել և ճանապարհ ցոյց տալ՝ ցրուելով աչքերի իլլիւզիաները, Թիւրիմացութիւնների վրայ իշխող վտանգաւոր խաւարը։ Հարկաւոր է լինում բոցերի մէջ նետուել, ծփացող ալիքների դէմ գնալ, կեանքի գնով, հերոսական ինքնուրացութեամբ ապուշ կտրած ամբոխի երակներում շարժել սառած արիւնը, եռանդ ներշնչել, ոգի տալ նէիրական գործի յաղթանակը պատրաստելու համար։

Ծանր է, այո, չափազանց դժուարին այս պարտքը, բայց նա էլ աւելի ծանրանում է, երբ անողոք պայքարի կրիտիքական շրջանում, յատկապէս այն ժամանակ, երբ մարդիկ առանց այն էլ դժուարութեամբ են իրար հասկանում, երբ ուժեղ ցնցումը խախտում է մտքերի սովորական ընթացքը, կրկնում ենք, հէնց այդ փափուկ վայրկենին առաջ են գալիս մարդիկ, որոնք բոլոր ուժով աշխատում են յարատեւել թիւրիմացութիւնները և աւելի խորը փոս բանալ չարատանջ ժողովրդի և նրա իսկական, անձնուէր բարեկամների մէջ։ Սրանք, ժողովրդի այս ներքին թշնամիները, ոչ երկիւղից շփոթուածներն են և ոչ սարսափից խելագարներ, այլ չարամիտ թշուառականներ, ստրկական դաստիարակութեամբ այլասերուած հրէշներ, դարաւոր բռնութեան տխուր վիժմունքներ, որոնց համար իրերի մի որոշ կացութիւն որքան և դաժանելի, որքան և հրէշաւոր լինի՝ հաճելի է. միայն թէ նրանք կարողանան իրենց շահերը ապահոված տեսնել, իրենց անունը փառաբանուած, իրենց զզւելի մորթին անվտանգ։

Տարաբախտաբար դեռ երբէք մի ժողովրդին հասած չարիքն աւելի ծանր չէր եղել քան եղաւ հայ ժողովրդինը. և իբրև հայ, ստիպուած ենք ամօթով խոստովանել, դեռ երբէք մի ժողովրդի ներքին թշնամիները, նրա արիւնը հրապարակական անամօթ սակարկութեան նիւթ շինող թշուառականների բազմութիւնն աւելի մեծ չէր եղել քան եղաւ մեր՝ հայերիս մէջ։ Ներկայ բոպէին, մեր պատմութեան այս դառնագոյն, այս արիւնոտ շրջանում, երբ ամբողջ ազգի գոյութեան խնդիրն է հրապարակի վրայ, հայի սև ճակատագիրը իբր ողբացող, նրա ցաւերին որպէս թէ կարեկից, նրա համար, օր ու գիշեր իբր թէ մտածող չարագործների մի բազմութիւն կայ, որ լալ ու ծիծաղել գիտէ անառակ կնոջ յատուկ հեշտութեամբ, որ իր քարէ կուրծքը ծեծել և խնդալ գիտէ, որ հառաչել ու հեգնել գիտէ նայելով տեղին, ժամանակին, միջավայրին։ Այսօր նա հակայեղափոխական է, վաղը յեղափոխական, միւս օրը ծանրախոհ չեզոք. գրպանի, դիրքի համար դողացող հայ ազգայի, հարուստի, վաշխառուի առաջ նա հակայեղափոխական է, խոհեմ է. հայասէր, ազնիւ, գաղափարի համար մարտնչող օտարի մօտ՝ նա կարմիր յեղափոխական է, անկաշառ. աննենգ հայրենասէր. իր նմանների շրջանում ցինիկաբար ամէն սրբութիւն հեգնող և բոլոր ժամանակ բաբեկամ հայ ժողովրդին, նրա արիւնոտ դիակը պիղծ ձեռներով շոյող, նրա արիւնը շահագործելու համար։

Բախտախնդիր հացկատակների այս բազմութիւնը ցրիւ է եկել ամէն տեղ, ուր հայ կայ. ամէն տեղ, ուր ազգային մեծ դժբախտութիւնը այսպէս թէ այնպէս շահագործելու հնարաւորութիւն կայ։ Ստեղծել է մի ամբողջ դպրելի գրականութիւն, որ միայնակ բաւական է ամենաանաղարտ անուն խայտառակութիւնով ծածկելու, ստեղծել է պատմութեան մի նոր տրամաբանութիւն, ուր մտքերը գլխիվայր են, վերջապէս ստեղծել է պատմութեան մի նոր փիլիսոփայութիւն, ուր ժողովուրդների հասարակական կեանքը ղեկավարող նոր և առանձին օրէնքներ են յայտնուած և այդ յատկապէս հայ ժողովրդի համար՝ անկախ հանրամարդկային հասարակական օրէնքներից, անկախ համաշխարհային պատմութիւնից։ Եւ այս բոլոր ցեխն ու ապականութիւնը արգիւնք է միայն և եթէ հաղարումի մութ նպատակների, անձնական ատելութեան, անձնական կապերի, կեղտոտ շահերի վրայ հաստատուած յարաբերութիւնների։

Ամբողջ պատմութեան մէջ չկայ և չի էլ կարող լինել մի այնպիսի տխմար, այլասերուած ժողովուրդ, որ ստրկութիւնը գերադասած լինի ազատութիւնից և չկայ

մեկը, որ այդ ազատությունը ձեռք բերելու համար՝ յեղափոխությունից, զենքից, արիունից դուրս ուրիշ միջոցի դիմած լինի։ Անողոք, բայց անժխտելի ճշմարտություն է, որ պատմական օրենքները զենքի հետ են կապել քանությեան տակ հեծող ազգերի ազատությունը և տարաբախտաբար՝ մինչև այժմ մարդկային ամենակարող միտքն անգամ արիունից դուրս չի ցոյց տուել մի այլ ճանապարհ արդարության և իրաւունքի յազթանակի համար. ի՞նչ արած, ճակատագրական է այդ. ողորմելի հային է վիճակուած խախտել այդ օրենքը։

— Ո՛չ, ո՞վ կ'ըսէ այդ, ժպտալով պատասխանում է տարաբախտ հայի վատ զաւակը, մենք ալ կռիւ կը քարոզենք, ես ալ յեղափոխական եմ։

— Դո՞ւք, յեղափոխակա՞ն... իսկ ա՞ն՝ ինչ որ գրել էք ու գրում էք, իսկ այնքան կեղտ ու մո՞ւրը, որ ամենայն օր թափում էք կախաղանների վրայ և բանտերում շունչերը փչած հայ նահատակների վրայ, իսկ սառը զրպարտությունները, իսկ այնքան լպիրշ, անամօթ ինսինուացիաները ժողովրդի ամենաընտիր զաւակներին ուղղած...

— Ես ալ մանակ կը հասկնամ յեղափոխությունը, պատասխանում է նա նոյն ժպիտով, հանդարտ։

Եւ այսպէս այս գարշելիները, յեղափոխությունը հասկանում են հակայեղափոխականության մէջ, հայ ժողովրդի փրկությունը՝ զենքից դողալու մէջ, ազգին ծառայելը՝ այս կրիտիքական ժամին՝ նրանից կենդանի օրինակները խլելու, նրան մի փոքր ոգի, յոյս ներշնչող հերոսների յիշատակը ցեխոտելու, անարգելու մէջ, և դրա հետ միասին այս սոդոն հացկատակները, ոյ ե՞ղ ա փ ո խ ա կ ա ն ն ե ր՞ են, թերթեր ունին, որովհետև գրիչ ունին, ունին նաև տխմար կամ միամիտ ընթերցողներ։

Սա ի՞նչ ժամանակ է, ի՞նչ բարքեր...

Մինչև երբ պիտի տիրէ մաքերի, գաղափարների այն շփոթը միաձիա գլուխներում, մինչև ե՞րբ անբարոյականությունը՝ բարոյականություն, վատությունը՝ քաջություն, մատնությունն՝ առաքինություն, ոճրագործությունը՝ ծառայություն պիտի հռչակի անպատիժ. մինչև ե՞րբ թշուառ հայ ժողովրդի ծոցից դուրս սողացած այդ օձերը պիտի թունաւորեն առանց այն էլ հազար տեղից, հազար զենքով խոցոտուած, վիրաւոր մարմինը։ Ո՞վ պիտի մաքրի վերջապէս արիունոտ գատի ապականած մթնոլորտը այդ չարագործ թիւրիմացությունների, երկդիմի մաքերից, ո՞վ պիտի անոլորում հալածանքի, անարգանքի առարկայ դարձնի այդ շահախնդիր սրիկաներին։ Ո՞չ ոք, եթէ ոչ ինքը, նոյն տանջուած հայ ժողովուրդը։ Ժամանակ է, այո՛, վաղուց հետէ ժամանակ է միանգամ ընդ միշտ հասկանալու, որ իւրաքանչիւր բառ իրեն յատուկ հասկացողությունն ունի և իւրաքանչիւր հասկացողություն իրեն համապատասխան անհրաժեշտ կիրառությունն ունի կեանքի մէջ ամենի համար. որ չի կարելի յեղափոխական լինել՝ առանց զենքի, զենք գործածել՝ առանց արիուն թափելու, որ չի կարելի լոկ լացով ու արցունքով ազատություն ձեռք բերել, որ թշնամին անողորմ է, ներնայ. դաւաճանություն է, սառրությունն է ուրիշ լեզու գործածել, քան զենքի, քան կռուի լեզուն է. ժամանակ է, որ հայ ժողովուրդը զբաղանքով երես դարձնի մոլորությունն սերմանող դարշելի սրիկաներից. խարանով ինքի ներանց պղնձէ անպատկառ ճակատները և իր գլխի ճարը տեսնի։ Բոլոր միւս բացատրությունները սրիկայական են և չարամիտ։

Միակ բացատրությունը սա—յեղափոխությունը՝ կռիւ է. կռիւը՝ միշտ զենքով է. զենքը՝ արիուն է. այս է փրկությեան միակ ճանապարհը...

ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐԻՑ

IV

Երբ ես մեծացայ, տղամարդ դարձայ,
Ու սիրտս զընգաց սիրով վա՛ռ-վառման,
Ուզեցայ սիրել աղջիկ սևաչեայ,
Բայց դու գիրկս ընկար, անգին հրացան։

Ու բոց-կարոտով գրկեցի ես քեզ,
Սղմեցի կրծքիս, անգին հրացան.
Իմ սրտի տերը, — հարսնացուս դարձար,
Աննենգ ընկերս, իմ սէր հրացան...

Երբ թշնամու դէմ կռիւ եմ վազում,
Դո՛ւ՝ կրծքիս սղմած՝ անքաժան հետս ես.
Դո՛ւ ես միշտ սրտիս մրրիկը յայտնում,
Քեզնով եմ փնչում, որոտում վրէժ...

Եւ երբ գազազած գլուխս դնեմ
Կրուի դաշտերում, իմ ուզեմ որ փորեն
Քեզնով ինձ մի փոս կրուի ընկերներս,
Քեզ հետս թաղեն, իմ հա՛րս, իմ ընկե՛ր...

V

Սալնոյ ձորերում, կուի ձորերում
Հայդուկն է ընկեր խոր վերքը սրտին,—
Վէրքը վարդի պէս բացուած կարմրուն,
Ու ձեռն է քցեր կոտրած հրացանին։

Ալինոտ դաշտերում ծղրիտն է ծղրում,
Հայդուկն է ընկեր մահուան խոր քնով.
Հայդուկը հոգում երազ է տեսնում, —
Հայրենի աշխարհն ազատ, ապահո՛վ...

Տեսնում է... արտում հոգին է շնչկնում,
Ցալուն գերանդին զնգում է անուշ.
Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք՝
Հայդուկի վրայ երգելով անո՛ւշ...

Սալնոյ ձորերով ամպեր են անցնում,
Հայդուկի վրայ արծիւն է գալիս.
Ա՜խ, սև աչերը արծիւն է հանում,
Հայդուկի վրայ ամպերն են լալիս...

ՀԱՑ-ԴՈՒՍԱՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀԱՅԵՐՈՒՆ

(Թանգամանութիւն Ֆրանսերէն ընագրէն)

Սիրելի Հայրենակիցներ,

Աբդիւլ Համիդ իր թագաւորութեան քսանհինգամեակը կը սկսի Սասունի նոր կոտորածով, բայց և այնպէս եւրոպական տէրութիւնները պաշտօնապէս մասնակցեցան սուլթանի յոբէլեանին։ Մինչև վեց տարի առաջ, սուլթանը իր արիւնի անյագ տենչը կշտացնելու համար կը բաւականանար միւսիւլման հպատակներուն արիւնը թափելով։ Բահը նստելէն ժամանակ մը ետքը՝ գաղտնի հրամաններով՝ նահանգական բանտերուն մէջ և Եըլտըզի աչքին դիմաց՝ սպանել տուաւ մեր ազգին լուսամիտ մարդիկը, որոնք նախատեսելով երկրին ապագայ աղէտքը՝ կը խրատէին իրենց վեհապետը՝ որպէսզի ժամ առաջ իմաստուն և առողջ վարչութեան մը ճամբան բռնէ։ Յետոյ Պոլսէն հեռացուց զարգացած երիտասարդ թիւրքերը, որոնք չէին թագցներ իրենց սոսկումը և սրտմտութիւնը հետևող արիւնային բարքերուն և անգթութեան գործերուն առջև։ Ոչ ոք անատեն չուզեց ձայն բարձրացնել իրերու այս վիճակին հանդէպ։

Ստոյգ է թէ, չարիք մը, որուն՝ սկզբի շոշորթներէն, առջևը չառնուիր, կը ծանրանայ ու տարափոխիկ կը լլլայ։ Աբդիւլ Համիդ, համբերանը ճեղքած իր առջի ոճիրներու անպատիժ մնալէն, աչքը դարձուց դէպի Հայերը, որոնց հոգեւորամտութիւնը սկսած էր դիւր չի գալ իրեն, և իր բռնակալի խօլ-դաժան նպատակը՝ աշխատելով ապահովել իր անձնական ապահովութիւնը, իր հպատակների արիւնը մտնելով, հերիք սեպեց դժբախտ Հայաստանը ջարդուփոր ընել։ Այս անգամ եւրոպական պետութիւնները ձայներնին բարձրացուցին՝ ըսելով որ „քրիստոնեաներուն արիւնը կը հոսէր“։

Դիւանագիտութեան արձակած սրտի այդ կեղծաւոր ճիչը մղեց Հայերը, աւա՜ղ, ճամբայ մը, ուր միայն դառն յուսախաբութեան պիտի հանդիպէին։ Ի՜նչ լաւ եղած կըլլար իրենց համար, եթէ դիմէին միակ բնական միջոցին, որ իրենց ձեռքին տակն էր, այն է՝ թիւրքերու հետ մէկտեղ գործել, քանի որ այս վերջիններն ալ նմանապէս միևնոյն վտանգին ենթակայ են։ Անհամբեր, Հայերը դժբախտաբար այն կողմը նայելու փոյթ չբրին, ինչ որ սակայն մեծ կարևորութիւն ունէր և սպասեցին Եւրոպայի աջակցութեան, մինչդեռ կը գատապարտէին, իբր բարբարոս, ճշմարիտ թիւրքերը, թէև բոլորովին այս կոտորածներուն պատասխանատու չեն։ Թիւրքերու՝ այսպէս ըսած վայրենութեան դէմ, Հայերու անէնք-թափութեան ձայնակցեցան դիւանագիտական դահլիճները, եւրոպական մամուլը, որոնք սակայն բոլորովին անտեղեակ էին՝ այն րոպէին՝ այս նիւթին վրայ մեր ժողովրդի կարծիքի շարժման մասին։ Այս անարդար վարմունքը, ձրի թշնամանք մըն է ազգի մը նկատմամբ, որուն հետ Հայերը և տէրութիւնները պէտք էին ըսել լսել։

Աւելի լաւ գնահատելու համար այժմ ըրած քննադատութեանս ճշգութիւնը և աւելի լաւ հասկնալի ընելու համար թիւրքերուն ներողութիւնը, ինծի կը թուի թէ կը բաւէ անցեալին վրայ աչք մը նետել։

1453-ին, Մէհմէտ II աշխարհակալը, որ իր դարուն էն հզօր ինքնակալն եղաւ—թիւրքերուն Պոլիսը առնելուն երկրորդ օրը —ամենամեծ քաղաքավարութիւնով մը, ներկայութեանը ընդունեց յունաց պատրիարքը և անոր ընծայեց ադամանդազարդ գայիսօն մը, իբր գրաւական յոյներուն նկատմամբ պահելիք ընթացքին և յայտարարեց անոր թէ ինք, ասկէ ետքը, յաղթուած ժողովրդին նախանձախնդիր պաշտպանը պիտի ըլլայ։

Իր թոռը, Սէլիմ I., պատմութեան այս գլխաւոր դէմքը, որ „աշխարհի կայսրութիւնը շատ նեղ կը գտնէր իր հզօր և խելացի գործունէութեան համար“, ցանկութիւն յայտնեց բոլոր քրիստոնեայ հպատակները միւսիւլմանութեան դարձնել՝ ապագային ամեն կրօնական կռիւ և երկպառակութենէ ազատելու համար։ Շէյխիւլ-իսլամը խսկոյն միջամտեց, յայտարարելով Սէլիմին, որ եթէ շէրիաթի և արդարութեան ամեն ոգու հակառակ՝ այս միջոցը գործ դնէր, ինք ալ դահընկէցութեան ֆէթվա (կրօնավճիռ) պիտի հանէր։ Ինքնակալը — որուն „Գազան“ մականունը տուած էին — յարգանքով խոնարհեցաւ Շէյխին իրաւ իրաւացի պաշտպանութեան առջև։ Արդարասրրութեան այս անմեր նկարագրումն է, որ օսմանեան կայսրութեան բոլոր հպատակները, մինչև օրս, կրցին պահպանել իրենց կրօնը, լեզուն և հեռաւոր ազգութիւնները։

Եթէ ակնարկ մը նետենք այն դարուն քրիստոնեայ Եւրոպայի վրայ, երբ Սէլիմ այնքան ուղղամտօրէն կը յարգէր իր երկրին մէջ կրօնական ազատութիւնը, կարելի չէ, որ մարդ չընդվզի։ Բացի կոտորածի տեսարաններէն, որոնք Եւրոպան սուրի և հուրի կը մատնէին, և կաթոլիկներու ու բողոքականներու եղբայրասպան կռիւներէն, Սպանիոյ Փիլիպոս II-ը, ողջ ողջ այրելու համար հաւատաքննիչներուն ափ կուտար մաւրիտանացիները, որոնք կուզէին իրենց միւսիւլման հաւատքը պահել, և որոնց կը պարտի Եւրոպան իր փայլուն քաղաքակրթութեան մուտքը և զարգացումը, և որոնք այդ դարուն իրենց բարձրագոյն աստիճանին հասցուցին գիտութիւնները, գրականութիւնները և արուեստները։

Ի՜նչ հարկ դարերէն այնքան վեր ելլելու, ինչու որ խորին ցաւով կը հաստատեմ թէ, քսաներորդ դարու Եւրոպան հեռու է արդարութեան և ներողհաւատութեան սկզբունքները պահելէ, զոր թիւրքերը պատիւ կը սեպէին յարգել 380 տարի առաջ։ Այսօրուան օրս, կովկասի հայերը, ռուսահպատակ, հրաման չունին բացէբաց լեզուներն խօսելու և իրենց ազգային պատմութիւնը չեն կրնար սորվեցնել դպրոցներնուն մէջ։ Ալզաս-Լոռէնի մէջ գերմանական լեզուն պաշտօնապէս վերցուց ֆրանսերէն լեզուի գործածութիւնը, հակառակ բնիկներու կամքի յօժարութեան։ Որքան մեր անցեալը փայլուն է, այնքան, ափսո՜ս, մեր ներկան մռայլ է. և այս բանին պատասխանատու մնակ Աբդիւլ Համիդն է։ ԺԹ-րդ դարուն Փիլիպոս II-ի գործադրած մունտառ քննակալութիւնը, երօնական պատրուակի տակ, այսօր Աբդիւլ Համիդ ինքն է որ գործ կը դնէ, ան ալ իր քէյֆին համար մինակ։ Եւրոպական դիւանագիտութեան առաջնորդները, իրենց վարմունքով բաժնեկից կըլլան այս քէյֆին, որ այնքան արիւնի կը նստի, որով արատաւոր պիտի մնան ժամանակակից քաղաքակրթութեան էջերը։ Տարակոյս չ՝ունիմ, որ մեր դարուն մեծամեծ խորհողները, որոնք կը լանան ընկերութիւնը իր բարձրագոյն կատարելութեան կէտին հասցնել, ինծի հետ համակարծիք են այս մասին։ Հետևաբար մենք պէտք է միանգամ ընդմիշտ և բոլոր անկեղծութիւնով իրարու ձեռք երկնցնենք։ Պէտք չէ այլևս

ուշը մնալ այսքան ամուլ, որքան վնասաբեր անգործութեան մը մէջ։ Աշխատինք միասին՝ ջնջելու համար մեր հայրենիքը կեղեքող բռնակալութիւնը, վերականգնելով Միդհատ փաշայի հրատարակած օսմանեան սահմանադրութիւնը, զոր Աբդիւլ Համիդ իսպառ խափանեց։ Պոլիսը ձգելով, մենք—ես և իմ զաւակներս—ուրիշ նպատակ չունեցանք՝ բայց եթէ աշխատիլ իրագործել այս օրինաւոր ծրագիրը։ Սուլթանին մեղի ըրած սպառնալիքները, ոչ ալ մեր իրաւունքներուն վրայ ձեռնձգութիւնները, պիտի չխեղդեն մեր խղճին ձայնը։

Համոզուած եմ, և ինչպէս դուք ալ պէտք է համոզուիք ինծի պէս, որ թիւրքերուն հետ դաշնակցութիւն մը, որոնք ձեզի պէս Աբդիւլ Համիդի զոհերն են, վերջ պիտի տայ օսմանեան կայսրութեան այս ցաւագին գլուխին։

Աբդիւլ Համիդի նշանաբանին՝ „Բաժնել տիրելու համար", միաբերան պատասխանենք, „Միութիւնը ուժ է"։

ՏԱՄԱՏ ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ

ՈՒՍԱՆՈՂ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ

Ընկերներ. դժբախտաբար թէ բարեբախտաբար՝ մեզ է վիճակուել ապրել մի այնպիսի պատմական ժամանակամիջոցում, երբ վճռւում է Մայր Հայաստանի ճակատագիրը։ Երկար, շատ երկար դարերի ընթացքում հայ ժողովուրդը՝ զուրկ քաղաքական անկախութիւնից՝ տարաւ ստրկական կեանքը, տարաւ բռնակալների ճնշումները, համբերեց... Այժմ այդ համբերութեան ժամանակն էլ անցաւ։ Նրա առջև դրած է ճակատագրական ալտերնատիվը — դարձեալ համբերել, կորցնելով ամեն մի յոյս՝ ապագայում որպէս ինքնուրոյն ազգ ապրելու, և կամ շարունակել սկսած կռիւը։

Մի կուլտուրական ժողովուրդ, հայ ժողովուրդը, որ եւրոպական գիտնականների վկայութեամբ՝ միջնորդ է հանդիսանում և պիտի հանդիսանայ արևմուտքի և արևելքի միջև, առաջնի լուսաւորութիւնը, կուլտուրան հաղորդելով երկրորդին, — այդ ժողովուրդն է ահա, որ երկար, երկար ժամանակ դիմանալուց յետոյ, այսօր կորստեան անդունդի առջևն է կանգնած։ Դիմացաւ նա ամեն տեսակ՝ թաթարական, մոնգոլական սոսկալի արշաւանքների. դիմացաւ նա, երբ անսահման խաւարն էր պատած հայ երկրին, դիմացաւ նա, երբ բացի յետադէմ կղերից. առաջնորդ ու ղեկավար չունէր. դիմացաւ մինչև այսօր։ Իսկ ա՞յժմ. այժմ, երբ այդ ժողովուրդը ունի մտածող մաս, որը նրա ապաւէնը պիտի լինէր, որը նրա առաջնորդն ու ղեկավարը պիտի լինէր, ա՞յժմ է, որ այդ ժողովուրդը պիտի մատնի կորստեան վտանգին։ Ի՞նչ, միթէ՞ այդչափ ընկած է մեր սերունդը. միթէ՞ մեր մայրերը ստրուկներ ծնեցին, որոնք պիտի տանեն ամեն տեսակ անարգանք, ամեն տեսակ ստորութիւններ, որոնց վրայ չի ազդում հայ մայրերի արիւն-արտասուքը, որոնց չի տանջում հայ հայրերի յուսահատ աղաղակները, վերաւորի դառն հառաչանքը, բանտարկեալի յուսաբեկ վիճակը, կախաղան բարձրացածների, նահատակուած մարտիրոսների յիշատակը։ Ի՞նչ. միթէ՞ այդ ամենը չպիտի ազդեն, չպիտի ցնցեն մեզ. ի՞նչ. միթէ՞ սառնասիրտ կերպով պիտի տանենք այդ բոլորը և ոգևորենք... իրաւաբանական ու բժշկական դասագրքերով։

Որպի՞սի սառնասրտութիւն։

Ընկերներ. մենք, որ նստած ենք համալսարանական նստարանների վրայ. մենք, որ ազատ ենք ընտանեկան հոգսերից. մենք, որ ամենամաքէլի տարին ենք կազմում ըմբռնելու համար այն ամենը, ինչ գաղափարական է, վսեմ է ու ազնիւ. մենք, որ ամենից շատ ենք ընդունակ ցնցուել վեհ գաղափարով. մենք, որ ընդունակ ենք ցնցել և ուրիշներին. մենք, որ „երկրի աղը" պիտի կազմենք, — մեզ վրայ ահագին բարոյական-պարտականութիւն կայ։

Ներկայ բոպէին, ներկայ դառն ու վշտահար բոպէին, երբ լքումն ու վհատութիւնը տիրել է մեր հասարակութեան բոլոր խաւերին, երբ նախկին ոգևորուած գործիչները՝ տեսնելով հասարակութեան այդ անտարբերութիւնը, վհատումը, իրենք ևս վհատել, թուլացել են, հայերիս դրութիւնը միանգամայն սարսափելի է և սարսափելի է մանաւանդ այն պատճառով, որ մենք մազաչափ անգամ ջանք չենք գործ դնում վանել ձանձրոյթը, անասելի թմրութիւնը և որ ամենագլխաւորն է՝ կարծես ուզում ենք հաշտուել այդ ապիկար դրութեան, այդ զզուելի իրականութեան հետ և... երկչոտութեամբ կանգ առնել կէս ճանապարհին. ոչ, աւելի վատ — յետ դառնալ այնտեղ, որտեղից սկսել էինք շարժուել։ Եւ այդպէս ենք վարուում մենք ահագին աշխատանք գործ դնելուց յետոյ, բիւրաւոր, թանկագին, անփոխարինելի զոհեր տալուց յետոյ...

Ո՞րպիսի թուլամորթութիւն։

Այո, ընկերներ, ներկայ բոպէին մենք, մատաղ սերունդն ենք, որ դեռ թարմ ենք մնացել. մենք ենք, որ դեռ չենք յոգնել, քանի որ դեռ ոչինչ չենք արել. մենք ենք, որ դեռ չենք հիասթափուել, չենք վհատել, քանի որ հիասթափուելու ու վհատելու առիթ չենք ունեցել. — մի խօսքով՝ ներկայումս մենք ենք կազմում այն տարրը, որ ամենից շատ ուժ ու ընդունակութիւն ունի նուիրական գործը առաջ մղելու։ Մենք ենք, որ կարող ենք ցնցել հասարակութիւնը, սթափեցնել, զարթեցնել նրան և ցոյց տալ այն հոսանքի ուղղութիւնը, որ տանում է դէպի ցանկալի ապագան։ Եւ ըմբռնելով մեր այդ ուժը և պատասխանատուութիւնը՝ միթէ՞ մենք պիտի լռենք և հանգիստ նստենք։

Հայրենիքի սէրը չէ, ընկերներ, որ մեզ պակսում է. մենք ամենքս էլ համարեա սիրում ենք Մայր-Հայաստանը։ Քարասրտութիւնը չէ, որ մեզ կանգնեցնում է թշուառների աղաղակների դիմաց. մենք այնքան էլ քարասիրտ չենք։ Դէպի գործը ունեցած հաւատի բացակայութիւնից չէ, որ մենք լռել ենք. մենք հաւատում ենք գործին։ Մեր մէջ կայ և՛ սէր, և՛ կարեկցութիւն, և՛ ցանկութիւն գործելու։ Ուրեմն ի՞նչն է մեզ պակսում։ Ուրեմն ի՞նչն է մեզ կանգնեցնում։ Պակսում է մի „խելառ" կամք և վճռականութիւն։ Զափազանց համլէտութիւնն է բուն դրած մեր մէջ, որ խանգարում է մեզ գործի կպչելու։ Պակաս համլէտութիւն և առաւել գօնքիշոտութիւն — ահա, ընկերներ, ի՞նչ պիտի լինի մեր նշանաբանը։

Ահա ի՞նչ է մեզ պակասում։

Մինչդեռ ներկայումս մեր առաջնակարգ նպատակն

է համալսարանական կրթութիւնը, հասարակական գործին և մասնաւորապէս յեղափոխական գործին՝ մենք նպաստում ենք դի միջի այլոց»։ Սակայն ներկայ օրհասական ճգնաժամին, երբ հայ ազգութեան դլխնել թէ չլինելու» հարցն է դրուած հրապարակի վրայ, ամօթ և ծայրայեղ անպատեաբեր է նեիրւեել այդ տեսակ երկրորդական նպատակներին։ Նեիրւեել այդ տեսակ նպատակի վայել է գուցէ մի ազատ շվեյցարացու, իսկ ստրուկ հայ ժողովրդի ա ն ա պ ա ւ է ն զաւակը պէտք է ունենայ աւելի մեծ, աւելի հսկայական նպատակ։ Ժողովրդի ազատութիւնը պէտք է լինի մեր իդէալը։

Դնենք հրապարակի վրայ ուժերի այն մաքսիմումը, որը ունենք մենք. դնենք, որպէսզի սեւերես չմնանք յաջորդ սերունդների և պատմութեան առջև։ Հայ ժողովրդից մենք այլևս պահանջելիք չունենք. ազգութեան և հայրենիքի համար նա կրեց տանջանքներ, աւեց արիւնի ու զոհերի մի այնպիսի քանակութիւն, որ կարող է գերազանցել ամենամեծ երևակայութիւն։ Մենք ենք այսօր հրապարակի վրայ պարտազանց անտարբերների դերում։

Դուրս գանք, ընկերներ, այդ ամօթալի դրութիւնից, որ պատմական դատաստանութեան առաջ է կրում. դուրս գանք գործելու։ Վերջնական յաղթանակը գաղափարինն է. իսկ գաղափարը մեր կողմն է։

Ռուսաց համալսարանի

ՈՒՍԱՆՈՂ

17 օգոստոս, 1900

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

Վան, 15 մայիս

Երեք-չորս ամիս առաջ, հայ թէ տաճիկ ապշութեամբ լսեցին թէ Վանէն կէս ժամ հեռու գտնուող Աւանց գիւղէն 30-40-ի չափ հայեր ձերբակալուած են, Հմայեակ անունով կաթոլիկ կեղծ վարդապետի մը հետ. եւ թէ կառոյց Անապատը ու ծովեզերեայ գիւղերն ապարդիւն խուզարկութիւններ եղած են։ Ամբողջ ազգայնակութիւնը կրնպասէր յեղափոխական նոր տառի մը, որ սակայն ուրիշ բան չէր, բայց եթէ խեղկատակ կոմէտիա մը, որով ի դերեւ ելան տաճիկ ոստիկանութեան ճիզվիթային ու կաթոլիկ վարդապետներու խաւար եւ ստոր հնարքները։ Այս երկու տարրերը, երկուքն ալ տարբեր չհերէ առաջնորդած, մէկը սովատանջ յետնեայ ամակամները դանձելու եւ աւելի բարձր պաշտօններու հասնելու տենչանքով, միւսը կառավարութեան հաճելի լինելով՝ Վանի մէջ հիմնարմատ ձգելու եւ իր քայլերու խոչընդոտ եղող մի կաթոլիկ հայ վարդապետ կրանդնելու դիտաւորութեամբ՝ ձեռք ձեռքի տուած յերիւրեցին վէպ մը՝ յեղափոխութեան ծանօթ պատրուակին տակ, եւ բանտը լեցուցին անմեղ զոհերով, որոնց դեռ երկուքը կը մնան, եւ ո՞վ գիտէ երբ պիտի ազատին։

Ոստիկանութեան առաջին քսմիսէր Հիւսնի էֆէնտի՝ խորհրդակցութեամբ կաթոլիկներու պետ բէր Սիմոնի եւ կոմսար Մէհմէտ եւ Մկրտիչ էֆէնտիներու, Աւանց գիւղը կը ղրկեն յեղափոխականի անուն տակ Մանուկ անունով սրիկայ մը, որ նախ կաթոլիկ վարդապետին եւ ապա նոյն գիւղի բնակիչներուն կը դիմէ, իբրեւ յեղափոխական փախստական, եւ օգնութիւն կը խնդրէ։ Դիւղացիները անտարբեր կը մնան. սակայն վերջինս գիւղի հին խուլ ռէսի եւ ոստիկան Շէվքէթի մշտական խորհրդակցութեամբ՝ 12 տարեկան մի հայ տղայի նամակ մը խմբագրել կուտան, ռէսին հակառակորդ եղող Մարգար անուն հայու մը կողմանէ կաթոլիկ վարդապետին, եւ ուրիշ խեղճ, աղքատ հայու մը միջոցաւ կը ղրկեն հասցէին։ Նամակին ետեւէն կը հանի եւ ոստիկանութիւնը, խուզարկութիւններ կը սկսին, կը ձերբակալուի վարդապետը ու նամակի շնորհիւ ալ Մարգարն ու այն դիւղացիներն, որոնք դժբախտութիւն ունեցած էին սիրելի չլինելու գիւղի ոստիկանին եւ խուլ ռէսին։ Երկու շարթեայ հարցաքննութիւններէ վերջ՝ դիւղացիները կազատին (ի հարկէ՝ շատերը կաշառքով) եւ բանտին մէջ կը մնան վարդապետը, Մարգարը եւ Հիւսնիի կեղտոտ գործակատար մասնիչ Մանուկը։

Հրապարակային հարցաքննութիւններու մէջ՝ Մանուկ տեսնելով որ ինքը վարձատրութիւն մը չստանալէ զատ՝ բանտին մէջ կը ճգնէ, բայարձակ կերպով դատարանի մէջ նրեւան կը հանէ ամբողջ եղելութեան մանրամասնութիւնները եւ կը հաստատէ Հիւսնի, Մէհմէտ եւ Մկրտիչ կոմսարներու այդ վէպին հեղինակ լինելնին, ինչպէս նաեւ խուլ ռէսի, ոստիկան Շէվքէթի եւ ուրիշ կեղտոտ հայերու մասնակցութիւնը։ Կը խոստանայ ի ոստիկանութիւնը, իսկ մութին մէջ բէր Սիմոն դիւային քրքիջով մը կը ժպտի ոստիկանութեան քթին։

Դեռ դատը կը շարունակուի։

20 մայիս

Այս օրերս Վանի հայերն ուրախութեան մէջ են բանտէն արձակուած տեսնելով 9 երիտասարդ անմեղ հայեր, որոնք գրեթէ ստրիւ մը ի վեր բանտին մէջ կը տառապէին՝ սովալլուկ թողնելով իրենց ընտանիքներն, շնորհիւ. դարձեալ, ոստիկանութեան խարդաւանքներու։ Եօթ-ութ հրապարակային հարցաքննութիւններէ վերջ՝ դատարանը հաստատեց անոնց անմեղութիւնը. երեւան հանելով ոստիկանութեան էնթրիկներն եւ ազատ արձակեց ամէնքն ալ՝ բայի Գալուստ անունով երիտասարդէ մը, որուն քով գտնուած է եղեր ողբացեալ հերոս Վազգէնի լուսանկարը։ Ազատ արձակուողներէն մին է Յովհաննէս Սէմէրճեան անուն մի դաւաճան մատնիչ, որ հին խնդիրներու համար ձերբակալուած էր։

5 յուլիս

Արճէշի եւ իր շրջականներն աւերող քիւրդ համիտիէ էմին փաշա 5 ամիսներէ իվեր բանտարկուած էր, նոյն դաւառի ազդեցիկ թիւրքերու ամբաստանութեան վրայ։ Հարիւրաւոր ոսկիներ ծախսելէ վերջ իսկ՝ ոչ մի յոյս չկար դարձեալ իր ազատման, քանի որ բաւական ծանր ամբաստանութիւններ կային իր վրայ (չկարծէք հայերու, այլ տաճիկներու, նոյնիսկ կառավարութեան կողմէ)։ այժմ նաեւ բանտէն բարձրագլուխ, Զէքի փաշայի եւ իր ազգական քէօռ Հիւսէին փաշայի միջնորդութեամբ։

Տաճկա-պարսկական սահմանագլխին մեծ ընդհարումներ կան պարսկահպատակ քիւրդերու եւ տաճկահպատակ քիւրդերու ու օսմանեան զինուորներու միջեւ։ Տաճկահպատակ քիւրդ Հիւսէին պէյ կրսպանէ Թահար խանը, որ հայասրանցի բաւական ազդեցիկ քիւրդ մն է եւ որ եկած էր Հիւսէին պէյի սահմանները աւարառութեան։ Բաւական կորուստներ կան երկու կողմէն։ Տաճիկ կառավարութիւնը ամէն կողմէ զօրք կը հաղցնէ, որովհետեւ կը վախցի թէ հայասրանցիին միւս դեղակիցներն, որոնք ամենամեծ քիւրդ աշիրէթն են, միանալով թէմուր խանի հետ՝ յարձակում գործեն նոյնիսկ կանոնաւոր զօրքին վրայ։

Տեսնենք ինչ պիտի լինի արդիւնքը։ Տաճիկ ժողովրդեան մէջ մեծ գրգռում կայ քիւրդերու դէմ. հասկացած են հիմա, որ անոնք չարիք մըն են իրենց համար. իսկ քիւրդերը այժմ հանարձակ եւ հաւասար կերպով կը կողոպտեն թէ հայը եւ թէ թիւրքը։ Վերջիններս երանի՜ կուտան շատ տեղեր հայ դիւղացիներու, որովհետեւ, կ'ըսեն, դուք գոնէ պաշտպաններ ունիք, ֆէդայիներ ունիք, որ ձեր վրէժը կը լուծեն։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԽՍԲԻԿՆԵՐ

ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ

(Վերջ)

Պետերբուրգ, 2 մայիս

Ահա վերջապէս և ամենափափուկ հարցը. — ի՞նչ է թոյլ տալիս ցենզորը։ Դժուար, շատ դժուար է պատասխանել այդ հարցմունքին։ „Դուք այնպիսի ոճով էք գրում, ասել է մի ցենզոր հայոց մի գրողի, որ եթէ եղանակի մասին էլ այդպէս գրէք, չեմ թոյլ տայ“... Լոգիկա որոնել այդպիսի պաշտօնավարութեան մէջ — միամտութիւն կը լինէր. և այդ պատճառով դրանց գործունէութիւնը վերջնականապէս բնորոշելու համար՝ ես չեմ դիմի մանրամասն, հետևողական քննադատութեան և եզրակացութիւնների, այլ առաջ կը բերեմ մի ամբողջ շղթայ իրական փաստերի, որոնք իրենց անեկդոտային կերպարանքով հանդերձ՝ միջոց կըտան ընթերցողին անսխալ գաղափար կազմելու մտքի դահիճների մասին, որոնք կրծում են ազատ միտքը և ազատ խօսքը մեր անբախտ երկրի մէջ։

Ցեռ անենք ցենզորական կծիկը *)։

1882-ին, երբ հայերէնի ցենզորը անտանելի մէկն էր, մի հայ ֆելետոնիստ ընտրում է իր համար կեղծանուն՝ Անկախեան։ Երբ յօդուածը տանում են գրաքննիչին, նա ջնջում է „Ան“ նախաձանկը և կեղծանունը դառնում է „Կախեան“։ Վրդովուած ֆելետոնիստը վազում է ցենզորին։ — „Ռուսաստանում չկայ անկախեան, փրփրած բացականչում է ցենզորը, ամէն մարդ կախում ունի կայսրից, որը եթէ ուզենայ կարող է կախել ամէնքին, ինձ էլ ձեզ հետ“...

80-ական թուականի սկզբներին, երբ Թիֆլիսում ցենզորի պաշտօն ստացաւ մի պարոն, որ հօր կողմից ռուս էր, մօր կողմից հայ, հայոց լեզուութեան մէջ միանգամայն անհետացաւ հայոց ազգ բառը, և նրա տեղ բռնեց՝ հայոց հասարակութիւն խօսքը։ Մի առժամանակ ամէնքը այդ համարում էին պատահական, բայց յետոյ պարզուեց, որ գրաքննիչը սիստեմատիկ կերպով ջնջում է ազգ բառը և տեղը դնում հասարակութիւն։ Եւ շատ անգամ էլ, երբ դիցուք կարդում էր՝ հայ-ուսուցիչ, հայ-գիւղացի, հայ-վաճառական, „հայը“ ջնջում էր և պահում՝ ուսուցիչ, գիւղացի, վաճառական։ Երբ հարցնում են այդ վարմունքի շարժառիթները, նա հպարտօրէն պատասխանում է այսպէս. „Հայերը այժմ ազգ չեն և չպիտի լինին. եթէ կառավարութիւնը իմ կարծիքը հարցնէր՝ ես խորհուրդ կըտայի միանգամից վերացնել Ռուսաստանում ապրող զանազան ազգերի անունները և գործ ածել երկու բառ միայն՝ — ռուսներ և ոչ-ռուսներ“...

Մի այլ գրաքննիչ, որ իր եռանդի համար „նորին գերազանցութեան“ տիտղոսին հասաւ, արգիլեց սկսեց նոյնիսկ պատմական-աշխարհագրական անունները։ Երբ լրագիրները գրում էին „Գանձակ“, նա ջնջում շինում էր՝ „Ելիսավետպոլ“. չէր թոյլ տալիս „Հրազատան“ կամ „Ախուրեան“ հայկական անունները նոյնիսկ ռատանաւորների մէջ և ստիպում էր խեղճ հեղինակին յարմարեցնել բանաստեղծութեան ոտները՝ „Զանկի“ և „Արփաչայ“ թիւրքերէն անուններին, մտածելով երևի, որ թիւրքերէն հնչիւնը այնքա՞ն փտանգաւոր չէ, որքան հայերէնը։ Իսկ ինքը թիւրք չէր, այլ հայ...

Ամառային մի շոգ օր, խմբագիրը հեռագիր է ստանում, որ երեխան ծանր հիւանդ է ամարանոցում և պէտք է շուտով հասնել։ Ի՞նչպէս վարուել։ Համարը դեռ պատրաստ չէ։ Մտածում է այսպէս անել. — տպարան ուղարկել կատարելապէս անմեղ լուրեր և յօդուածներ՝ փողոցների մաքրութեան, առողջարար ջրի, մըրգաբուծութեան և վերջապէս — զանազանակերպ լինելու համար — կանանց հարցի մասին, և ապա կարգադրում է երեսները կապել և տպել առանց ցենզորին սպասելու, ապահով, որ նա ոչինչ չունի ընելու։ Երբ երեսները կապում են և սկսում տպագրել՝ ահա գալիս է ցենզորական թերթը, և ո՜հ, ողբալի տեսարան. գրաքննիչը ջնջել է գիւղատնտեսական մի յօդուածից ահա թէ ինչ.

„Սառ հասարակ անդրաժեշտ է յեղափոխութիւն մտցնել մեր գիւղատնտեսութեան պարապմունքների ամբողջ եղանակի մէջ. առանց այդ հիմնական յեղափոխութեան՝ մեր գիւղատնտեսութիւնը առաջ չի գնայ“։

Կանգնեցնել մեքենան, քանդել երեսները, ոչնչացնել արդէն տպագրած երեսները, այդ կը լինի դժոխային աշխատանք։ Բազմատանջ խմբագիրը՝ հիւանդ երեխային գնաու փ խարէն՝ ցենզորին է գնում աղերսելու — „Ես չեմ սիրում յեղափոխութիւն բառը և կը խնդրեմ նոյնիսկ գիւղատնտեսական յօդուածներում գործ չածել։ Գրեցէք մի այլ բառ, օրինակ բարեփոխութիւն՝ և ես կը թոյլատրեմ“...

Բայց միայն „յեղափոխութիւն“ կամ „ազգը“ չէ որ գոգոում է ցենզորին, այլ ամէն բան, մինչև իսկ երկոտանի հաւը... Լսեցէք։ Օրերից մէկում լրագիրները ուղում են տպագրել բեպօրտեօրի այս լուրը.

„Թիֆլիսի Վկրա թաղում հաւերի մէջ երևայել է մի հիւանդութիւն, որ մի քանի ժամում սպանում է նրանց։ Զգուշացնում ենք քաղաքի բնակիչներին այդ տեսակ հաւերի միսը ուտելու“։

Լուրը արգելւում է հետևեալ մակագրութեամբ՝ „Ուղարկել բժշկական վարչութեան“։

Էլի մի անհաւատալի դէպք։ Թղթակիցներից մէկը գրում է.

„Նախիջևանի գաւառը հող ունի, բայց ջուր չունի, մինչդեռ հարևան Զանգեզուրի գաւառը հարուստ է ջրերով։ Ցանկալի է, որ ազգաբնակութիւնը մտածէր ջուր անցկացնել այդ գաւառից՝ անջրդի հողերը միաւորելու համար“։

Ցենզորը այդ վերացական ցանկութիւնն էլ է արգելում, այսպիսի մակագրութեամբ՝ „Դրա համար նախ պէտք է երկու գաւառների իշխանութեան թոյլտուութիւնը“...

Թիֆլիսի մի լրագրի բաժանորդները սկսում են տրրտընջալ, որ լրագիրը կամ շատ ուշ է լոյս տեսնում

*) Այս փաստերը ես քաղում եմ մի ծեռագրից, որ կրում է „Հայ գրողի յուշատետրը“ վերնագիրը։ Հեղինակը, շատ տարիներ գործած գրական ասպարէզում, լաւ ծանօթ է կովկասեան ցենզորական կեանքին եւ պատմութեան։ Եթէ մի օր այդ գրուածքը լոյս տեսնի, դա կը լինի մի թանկագին էջ ցենզորական պատմութեան համար։

առաւօտը, կամ յաճախ բոլորովին լոյս չի տեսնում։ Վերջապէս դիմում են խմբագրութեան՝ բացատրութիւն խնդրելով։ Ցայտնւում է, որ ցենզօրը յաճախ գործ է դնում հետևեալ միջոցը. — թերթը իր մօտ պահում էր մինչև գիշերուայ 1 կամ 2 ժամը, որպէս զի աւելի լաւ ուսումնասիրի, և այդ պատճառով տպագրութիւնը վերջանում էր միւս օրը շատ ուշ։ Բայց յաճախ էլ նոյնիսկ գիշերուայ 1 ժամին վերադարձնելով թերթը՝ այն ժամանակ, երբ արդէն սկսում էին տպագրել, յանկարծ գիշերուայ ժամը 2-ին կամ 3-ին աղմուկով ներս էր վազում և բացականչում. „Կանգնեցրէք, մի տպագրէք, մի բան պէտք է հանեմ“։ Իրարանցում, դժգոհութիւն, աղմուկ։ Տպագրիչները իմաց են տալիս տպարանատիրոջ, տպարանատերը խմբագրին։ Գալիս է նա և ահա մի ձանձրալի վէճ խմբագրի և ցենզօրի մէջ։ Ո՞ւմն է իրաւունքը։ — Իրաւունք չունէք, քանի որ արդէն թոյլատրել էք, կրկնում է խմբագիրը։ — „Իրաւունք ունիմ, քանի որ ցենզօր եմ“, պատասխանում է միւսը։ Վերջիվերջոյ մեքենայից հանել էր տալիս երեսները և դուրս գցում իր ուզած կտորը... Միւս օրը լրագիրը լոյս չէր տեսնում, և խմբագիրը գնում էր ցենզուրական կոմիտէ՝ գանգատելու այդ գիշերային կամայականութեան դէմ. իսկ ցենզօրը միշտ արդարանում էր կրկնելով. „Միայն պապն է անսխալական. ուշ գիշերը միայն հասկացայ, որ սխալւել եմ, և գնացի տպարան՝ իմ սխալը ուղղելու“ — այսինքն արգիլելու...

1889-ին Ալեքսանդր III պիտի գար Թիֆլիս։ Պոլիցիան քաղաքից դուրս էր քշում „անվստահելի“ անձանց։ Այդ միջոցին վրաց դերասանական խումբը, օգտուելով քանքարաւոր մի դերասանի Թիֆլիս գալուց, վճռում է ներկայացնել Շէքսպիրի „Համլէտը“, որ մինչև այդ՝ վրաց բեմի վրայ չէր խաղացւած, թէև արդէն շատ անգամ ներկայացւած էր ռուսաց կամ հայոց թատրոններում։ Պիեսի թարգմանութիւնը տանում են վրաց ցենզօրին։ Նշանակած ժամանակին գալիս են յետ ստանալու, ո՜հ, զարմանք, ցենզօրը յայտարարում է, որ թոյլատրել չէ կարող — Ի՞նչպէս, „Համլէտը“ արգելւած։ — Այո՛, արգելւած, սառնարիւն պնդասխանում է ծերունի գրաքննիչը։ Դերասանական խումբը գանգատ է ներկայացնում կոմիտէին։ Կոմիտէի նախագահը, բաւական զարմացած, յաջորդ ժողովին խնդրում է ցենզօրին բացատրել, թէ ինչո՞ւ է արգելում վրաց բեմի համար „Համլէտը“, — մի այդպիսի հանրածանօթ պիէս։ Եւ „փորձւած“ պաշտօնեան, նստած իր բազկաթոռի վրայ, փառաւոր հմայագեստը հագին, հետևեալ խորիմաստ բացատրութիւնն է տալիս ժողովին. „Ինչպէս գիտէք, յարգոյ պաշտօնակիցներ, „Համլէտի“ մէջ է այն տեսարանը, ուր տեղի է ունենում արքայասպանութիւնը։ Արքայասպանութիւն, այժմ, երբ շուտով Թիֆլիս պիտի ժամանի Նորին Կայսերական Մեծութիւն թագաւոր կայսրը Ալեքսանդր Ալեքսանդրովիչը — մի գայթակղեցուցիչ դէպք է, որի առաջը պիտի առնել, և ահա այդ պարզ նպատակով, ես իբրև հաւատարիմ հպատակ և իբրև ցենզօր, արգիլեցի „Համլէտի“ ներկայացումը“... Ցենզօրների մէջ հազւագիւտ չեն ապուշները՝ բայց և այնպէս ամենքն էլ ապշեցին... Եւ ոչ մի բացատրութիւն բաւական չեղաւ համոզելու „հաւատարիմ հպատակին“, որ նա սխալւում է, այնպէս որ համբերութիւնից հանւած նախագահը յայտարարեց. „Որովհետև դուք չէք ուզում թոյլատրել, ուստի ես եմ թոյլատրում՝ իմ պատասխանատուութեամբ“... Եւ ասում են, որ դեռ շատ օրեր „հաւատարիմ հպատակը“ սպասում էր, որ անհեռատես նախագահը կը պատժւի իր „պատասխանատուութեան“ համար, բայց նրա երկիւղը չիրագործւեց, որովհետև „Համլէտի“ ներկայացումից յետոյ անգամ, ոչ մի վրացի, որ ներկայ էր խաղին, մտքովն անգամ չանցկացրեց արքայասպանութիւն գործել, — սպանութեան փորձ անել Ալեքսանդր III-ի կեանքի դէմ...

Համաձայն օրէնքի, գրաքննիչը իրաւունք չունի երբ և իցէ ոչ մի բառ, մի տառ աւելացնելու. նա կարող է միայն ջնջել։ Բայց ահա թէ ինչ է ասում փաստը։ Մեծաւ Ալեքսանդր III. կովկասեան լրագիրներից մէկը պատրաստում է մի յօդւած, փաստական, բայց առանց ներքողների, առանց շինծու գովասանքների։ Գրաքննիչը այդ յօդւածին աւելացնում է անսանձ գովասանքների մի ամբողջ էջ։ „Ես այդ չեմ կարող տպագրել“ — մրմնջում է յուսահատ խմբագիրը։ „Իսկ առանց դրան՝ ես չեմ թոյլ տայ ոչ միայն յօդւածը, այլ նոյնիսկ ամբողջ համարը“ — պատասխանում է սառնարիւն ցենզօրը։

Թիֆլիսի „Ուղղափառութիւն տարածող ընկերութիւնը“ լրագիրներին ուղարկում էր իր նուիրատուների անունները տպագրելու համար։ Մի անգամ նուիրատուներն էին թագաժառանգ Գեորգի իշխանը, որ նուիրել էր 500 ռուբլի, և բագուեցի թուրք դրամատէր Թաղիևը, որ նոյնպէս նուիրել էր 500 ռուբլի։ Թիֆլիսի լրագիրներից մի քանիսի մէջ լոյս տեսաւ այդ լուրը, բայց երկու լրագիր, որ քննում էր միևնոյն ցենզօրը, անկարող եղան տպագրել այդ ձևով։ Հարցրին պատճառը։ Բանից դուրս եկաւ, որ ցենզօրը չէ թոյլ տուել ասելով. „Ի՞նչպէս կարելի է թագաժառանգի անուն մօտ դնել մի որևէ հպատակի անուն“։ — Բայց դա ընկերութեան ուղարկած ցուցակն է և երկուսն էլ 500-ական ռուբլի են տուել. նկատել է խմբագիրը։ — „Այդ միևնոյն է, չեմ թոյլ տայ. եթէ ուզում էք՝ թագաժառանգի անունը տպագրեցէք այսօր, իսկ միւսինը պահէք վաղը“...

—

Նայենք պատկերին այլ կողմից։

Այն օրից, որ գոյութիւն ունի „գաղտնի շրջաբերականների“ սիստէմը ցենզուրական գործունէութեան մէջ, երբէք մամուլը վստահ չէ, թէ ինչի մասին կարելի է գրել, և ինչի մասին ոչ։ „Վերջապէս ասացէք, ի սէր Աստուծոյ, ինչի՞ մասին գրենք, որ չջնջէք“ — հարցնում է մի հրապարակախօս՝ գրաքննիչին։ — „Ես ինքս էլ չգիտեմ, պատասխանում է՝ շատ քիչ անգամ անկեղծ խօսող ցենզօրը. այն, ինչ այսօր թոյլ եմ տալիս, վաղը առաւօտեան կարող եմ միանգամայն արգիլել. դա կախւած է այն հրահանգից, որ այս գիշեր կարող եմ ստանալ“։ Շրջաբերական ամէն քայլափոխում։ Ահա դրա ապացոյցները։

1897 թւին Ռուսաստանում տեղի ունեցաւ մի օրինաչափ ժողովրդագրութիւն։ Բնական է կարծել, որ ինքը կառավարութիւնը պիտի աշխատէր, որ մամուլը հոգ պատրաստէր տպէտ ժողովրդի մէջ այդ կարևոր ձեռնարկութեան համար։ Բայց բոլորովին հակառակը։ Դեռ նոր էին սկսել դրել, երբ առանձին հեռագրով խստիւ արգիլւեց կովկասեան մամուլին՝ մի

տող անգամ գրել միօրեայ ժողովրդագրութեան մասին։ Եւ տգէտ ժողովուրդը, վախեցած, շատ բան թագցրեց, և շատ ուշ միայն հասկացաւ կառավարութիւնը, թէ ինչ մեծ սխալ է գործել՝ արգիլելով գրել մի այդպիսի հարցի մասին։

Տեղի ունեցաւ „դուխոբուրների" հալածանքը. — Ախալքալաքի ամբողջ գաւառը տակնուվրայ եղաւ. աքսոր, ձերբակալութիւններ, ծեծ, մտրակ, նոյնիսկ սպանութիւն։ Հազարաւոր մարդիկ թողեցին երկիրը, — մի ամբողջ գաղթականութիւն։ Ոչ միայն մի գաւառում, այլ ամբողջ նահանգում երկու տարի շարունակ դա այրող հարցն էր. բայց ահա հասաւ արգիլող հեռագիրը և մամուլի մէջ և ոչ մի խօսք, նոյնիսկ յիշատակութիւն „դուխոբուր" անուան. — կարծէք այդ դէպքը պատահած լինէր ոչ թէ Կովկասում, այլ ուրեմն դեռ չգտնուած մոլորակի վրայ...

Սկսւում է խօլերա — ամենասաստ բանը քաղցած ու տգէտ երկրի մէջ։ Մամուլը փորձում է զգուշացնել, ուշադրութիւն հրաւիրել։ Դարձեալ հեռագիր. — „խստիւ արգիլել գրել խօլերայի մասին"։ Խօլերան կոտորածներ է անում, աղգաբնակութիւնը սարսափած փախչում է. — բայց էլի և ոչ մի խօսք։ Եւ ամիսներ միայն անցած, երբ Պետերբուրգում կազմւում է ուրեմն „խօլերային կոմիտէ", այսինքն պաշտօնական մարմին, որի գլխաւոր պաշտօնն է թագցնել աղէտի մեծ մասը, այն ժամանակ միայն լրագիրներին իրաւունք է տրւում տպագրել տեղեկութիւններ, այսինքն այն, ինչ որ նրան կը հաղորդէ պաշտօնական կոմիտէտը... Այսպէս եղաւ 1892-ի խօլերայի ժամանակ, այսպէս է եղել և ուրիշ դէպքերում։

Այդ „պաշտօնական մարմինները" այժմ կրկնապատկւել են և մէկի տեղ պահանջւում է երկուսի, շատ անգամ երեքի թոյլտուութիւնը։ Օրինակ. եթէ լրագիրը ուզում է տպագրել ուրեմն տեղեկութիւն դումաների մասին, պէտք է բացի ցենզորից՝ ստանայ նաև նահանգապետի համաձայնութիւնը։ Եւ եթէ այդ չի իրագործւում, միայն այն պատճառով, որ նահանգապետը չի ուզում ձանձրանալ։ Ուրիշ օրինակ։ Մէկը ուզում է տպագրել ուրեմն բժշկական գիրք։ Ցենզորի թոյլտուութիւնը բաւական չէ. նա պէտք է ստանայ և բժշկական վարչութեան թոյլտուութիւնը։ Մի ուրիշը դիտաւորութիւն ունի տպագրել ուրեմն քննադատութիւն՝ դպրոցական հարցի մասին. բացի ցենզորից՝ անհրաժեշտ է և ուսումնական վարչութեան համաձայնութիւնը, որը, իհարկէ, երբէք չի ստացւում, որովհետև Ռուսաստանում չկայ մի վարչութիւն, որը կամենայ ուրեմն քննադատութեան ենթարկւել։ Կամ, դիցուք մի աստուածաբան, պատրաստում է մի գիրք ուրեմն եկեղեցական հարցի մասին. դարձեալ՝ բացի ցենզորից պահանջւում է և հոգևոր իշխանութեան առանձին թոյլտուութիւնը, որ ուրիշ խօսքով կը նշանակի անօգուտ կերպով ամիսներով թափառել ուրեմն „հոգևոր" անձի անմատչելի դռների մօտ... Մի օրինակ ևս։ Միապետը կամ նրա որդին վճռել է դուրս գալ իր պալատից՝ ճանապարհորդելու։ Համար։ Ոչ մի լրագիր չի կարող տպագրել այդ։ Հասարակութեան մէջ լուրեր են պտտում, մարդիկ միմեանց հարց ու փորց են անում, գիտեն որ կայսրը ճանապարհորդելու է, — բայց տպագրել չի կարելի և ոչ մի խօսք։ Ամբողջ պոլիցիան ոտի վրայ է. քաղաքի փողոցները մաքրում են, հին պատերը ներկել են տալիս. — բայց էլի մամուլի մէջ չի տպագրւում և ոչ մի խօսք։ Դիտէք ինչու։ „Որպէս զի նախօրօք չիմացուի և ուրեմն դաւադրութիւն չպատրաստուի", փաստաբանում են չինովնիկները։ Վերջապէս դալիս է կայսրը. ամբողջ քաղաքը ոտի վրայ է. լրագիրը իր պարտքն է համարում ծախք անել, թղթակիցներ ուղարկել, հեռագիրներ ընտանալ, որպէս զի հասարակական հետաքրքրութեան և իր բաժանորդներին լուութիւն տայ։ Բայց ի զուր։ Եւ ոչ մի խօսք։ Ամէն մի լուրի համար պէտք է ստանալ կամ պալատական մինիստրի յատուկ թոյլտուութիւնը, կամ պիտի սպասել, որ „պաշտօնական" լրագիրը տպագրի „պաշտօնական" նկարագրութիւնը, որտեղից և միւս լրագիրները կարող են արտատպել։ Պաշտօնականից դուրս և ոչ մի խօսք։

Պաշտօնականացնելը — եթէ այդ խօսքը կարելի է գործածել պատահական բան չէ, այլ մի նախամտածած, մշակուած սիստեմ, որ գործածութեան մէջ է մտցրուած մանաւանդ 80-ական թուականներից, այսինքն այն դէպքերից, որոնցով սկսւեց Ալեքսանդր III-ի թագաւորութիւնը։ Դա թէ Ալեքսանդր III-ի և թէ Նիկոլայ II-ի կառավարութեան նշանաւոր ղեկավարի՝ ծանօթ Պոբեդոնոսցեվի „ծրագրի" մի բեկորն է։

Ի՞նչ է այդ ծրագիրը. երևի կը հարցնէք դուք։ Պատմեմ մի քանի խօսքով։ „Անշարժութեան քուրմը", որ իր անմատչելի գրասենեակի մէջ անթիւ դժբախտութիւններ է ստեղծագործել խեղճ Ռուսաստանի համար, մի օր ներկայացնում է իր կոլեգներին այսպիսի մի առաջարկ. — վերացնել անկախ, մասնաւոր մամուլը և նրա տեղ հաստատել կառավարչական մամուլ։ Բոլոր լրագիրները, ինչպէս են այժմ պաշտօնական թերթերը, պէտք է ունենան կառավարութեան կողմից նշանակուած խմբագիրներ, կամ այլ խօսքով՝ խմբագիրը ուրիշ բան չպէտք է լինի, եթէ ոչ մի չինովնիկ, նշանակուած կառավարութեան ձեռքով, որը անմիջապէս կ'արտաքսւի իր պաշտօնից, հէնց որ կը շեղւի իր համար նախագծագրած ճանապարհից։ Այդ նենգամիտ առաջարկով Պոբեդոնոսցեվ միտք ունէր երկու նպատակի միանգամից հասնել. — համ մամուլ ունենալ, որպէս զի ջասեն թէ կառավարութիւնը այն աստիճանի վայրենութեան է հասել, որ ոչնչացնում է տպագրական խօսքը, համ էլ ազատուել քննադատութեան նոյնիսկ այն վերջին նշոյլներից, որոնք երբեմն, երբեմն, ինչպէս անսպասելի կայծեր, ցայտում են մամուլի էջերից... Սակայն այդ առաջարկը, թէև սկզբունքով դուր եկաւ Ալեքսանդր III-ի շրջապատին, բայց և այնպէս չընդունուեց. և այդ ոչ թէ այն պատճառով, որ օգտակար չէր նկատւել, այլ միմիայն այն պատճառով, որ դա կը համարւէր պետական մի „սկանդալ", ամբողջ աշխարհի ծիծաղը գրգռող մի ապուշութիւն...

Ի դէպ, այդ խումբը այդպիսի ծրագիրներ շատ է կազմել։ Օրինակ. 1) 1887 թւի ծրագիրը, որով առաջարկւում էր արտասահմանեան անցագիրը շինել տարեկան 120 ռուբլի, որպէս զի „ռուսահպատակները" Եւրոպա չգնան և „ազատ" մտքերով չվարակւին։ 2) 90-ական թուականի գաղտնի ծրագիրը, որ առաջարկում էր միայն մի լեզու ճանաչել ամբողջ Ռուսաստանում, և արգիլել լեհերին, ֆիններին, հայերին, վրացիներին կամ թիւրքերին ուրեմն լրագիր կամ գիրք տպագրել, ինչպէս

և այդ լեզուններով թատրոնական ներկայացումներ տալ։ 3) այն ծրագիրը, որ նպատակ ունէր հիմնապէս լուծել զեմստվոն, դումաները իբրև ինքնավարական մարմիններ և դատաստանական նոր օրէնքները, որոնք դատարանին անկախ բնաւորութիւն են տուել և թոյլ չեն տալիս, որ կառավարութիւնը խառնի արդարութեան գործի մէջ և վարի, ինչպէս կամենում է... Բայց այդ բոլոր ծրագիրները „ամբողջութեամբ" չընդունուեցին, իբրև „ծայրայեղ և անքաղաքագէտ" միջոցներ։

— „Ինչո՞ւ ոչնչացնել, ինչո՞ւ սագերին գրգռել, ասել է ժողովի ժամանակ մինիստրներից մէկը, քանի որ մենք կարող ենք ունենալ անկախ ժամուլ՝ բայց միշտ ցենզորը գլխին, զեմստվո՝ բայց առանց իրաւունքի, դումա՝ առանց ինքնավարութեան, քանի որ կարող ենք արտասահմանեան անցագիրը էլի 20 ռուբլիով ծախել, բայց անցագիր չտալ գնացողին՝ երբ կամենում ենք, և բանտարկել վերադարձողին՝ երբ ուզում ենք։ Այդպիսով — վերջացնում է դիպլոմատ մինիստրը—համ ոչխարները սաղ կը մնան, համ գայլերը կուշտ կը լինեն"...

Այդպէս էլ արեցին, այդպէս էլ անում են...

Ահա այդ „սիստեմին" հետևելով է, որ այժմ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը և ցենզուրական կոմիտէները լքցած են հրէշներով։ 1893 թուին „Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան" պետ նշանակուեց Սոլովիեվ, տգարամիտ, անպէտքացած մի ծերունի, որ իր խաւար մտքերով շատ լաւ կարող էր մրցել միջին դարերի մի կրօնաւորի հետ։ Փրփուրը բերանին, այդ ծերուկը իրեն դիմողին մի բան գիտէր ասել. „Ի՞նչ, նոր ըսագի՞ր. եղածներն էլ դեռ շատ են, թոյլ չեմ տայ"։

„Մի օր — պատմեց իմ ծանօթ մի կովկասցի — Պետերբուրգ գալով և ամբողջ շաբաթ ունկնդրութեան սպասելով, հազիւ պատիւ ունեցայ ընդունուելու Սոլովիեվի կաբինետում։

— Նստեցէք։

Նստում եմ։

— Ձեր անո՞ւնը։

Ասում եմ։

— Ի՞նչ էք ուզում։

„Ես պատմեցի, որ 7 ամիս է խնդիրք եմ տուել բժշկական մի թերթ հրատարակելու համար, բայց ոչ մի պատասխան չկայ և խնդրեցի մի կարգադրութիւն անել։

— „Իմ կարգադրութիւնը սեղանին խփելով պատասխանեց ծերունին — մերժումն է։ Եթէ ուզում էք բժշկական գիտութիւններ տարածել, ամենալաւ միջոցն է, որ տպագրէք այդ բոլորը ալմանախների մէջ, օրացոյցների յետևը. կարիք չկայ առանձին թերթ հիմնելու։ Թերթեր, թերթեր, անվերջ թերթեր։ Դուք, ձեր Կովկասում առանց այդ էլ շատ ունիք, և դեռ ազատութիւններ էլ են անում, ազգերի հաւասարութիւն, զեմստվոներ, ինքնավարութիւն և չգիտեմ ուրիշ ինչ յիմարութիւններ ասէք, որ չեն գրում։ Ես նրանց ցոյց կըտամ։ Ա՛յ, այստեղ էլ մենք քիչ չունենք այդ լիբերալներից — բացականչեց ծերունին՝ խփելով սեղանի վրայ դրած „Նովոստի" մի համարին, — ջհուդական ազատամտութեան բուն։ Ես դրանց ազատամտութիւն ցոյց կըտամ... Գնաք բարով, ձեր խնդիրքի պատասխանը կըստանաք։ Գնաք բարով"...

Պատասխանը ստացաւ — մերժում...

Եթէ այդպիսի մէկն է ամբողջ վարչութեան ղեկավարը, երևակայեցէք ինչ կը լինեն փոքրները, ստորադրեալները, տեղի և պաշտօնի համար սողունացած մարդակերպները։ Եւ յիրաւի, ոչ մի հիմնարկութիւն այնքան հարուստ չէ բարոյական հրէշներով, ինչքան ցենզուրական հիմնարկութիւնները, որտեղից բնականաբար լաւ մարդիկ խոյս են տալիս։

Ահա դրա տխուր ապացոյցները։ Կովկասեան ցենզուրական կոմիտէի մէջ, երկար տարիներ աւագ ցենզորի պաշտօնը վարեց մի ռուս, որ եղել էր երբեմն Թաւրիզի ռուսաց հիւպատոս, և վոնտուել էր այդ պաշտօնից այն „անմեղ" պատճառով, որ թէև ռուսաց հիւպատոս, բայց կողոպտել տուեց ռուսաց փոստը՝ վարձու աւազակների ձեռքով։ Եւ չնայած այդ աւազակութեան, ցենզոր եղաւ, այն էլ գեներալի աստիճանով... Մի ուրիշը, որ ամբողջ 20 տարի ցենզորի պաշտօն կատարեց, նոյնպէս գեներալի աստիճանով՝ այնքան անարժան էր համարում, որ իր պաշտօնից դուրս գալուց յետոյ, ուրիշ ոչ մի տեղ պաշտօն չստացաւ և վերջը սկսեց լրտեսութեամբ պարապել... Թիֆլիսում յայտնի են դէպքեր, որ գրաքննիչը կաշառք էր վերցնում խմբագիրներից, յօդուածները թոյլ տալու համար։ Եւ դիտէք ինչ ձևով։ „Ցարգելի բարեկամ. այսօր պէտք ունեմ 200 ռուբլու, յոյս ունեմ չէք մերժի ուղարկել մի քանի օրով"։ Այդ մի քանի օրը յաւիտենականութիւն էր, և եթէ 200 ռուբլին իսկոյն ծրարով չգար, կարմիր թանաքը և մկրատը գիտէր ինչպէս լուծել վրէժը... Մի ուրիշը միաժամանակ ցենզոր էր և գաղտնի ոստիկանութեան անդամ ու փտան գաւոր լրտես։ Լրտեսութիւնը, առհասարակ, պետական առաքինութիւն է ցենզուրական աշխարհում... Ազգով հայ մի պաշտօնեայի յանձնուեց ցենզորի պաշտօնը այն պայմանով, որ նա գաղտնի զեկուցումներ տայ հայկական գործերի մասին։ Եւ այդ զեկուցումներով, իբրև ապահով սանդուխներով նա բարձրանում էր դէպի գեներալութիւն... Մի օր յայտնուեց, որ մի „չինովնիկ" իր դահլիճի պատերը զարդարում է թանկագին նկարներով, որոնք ստացած էին արտասահմանից և յանձնուած նրա քննութեան։ Այդ գողը՝ մի ցենզոր էր։

Եւ այդպէս տասնեակներ, հարիւրներ...

. . . . . .

Եւ խեղճ գրողները, ամբողջ գրականութիւնն ու մամուլը, այդ սրիկաների և ապուշների ճանկերում... Կա՞ արդեօք մի վիճակ, աւելի տրաժիք, աւելի սպանիչ և աւելի յուսահատական...

—

Սեպտեմբեր, 1900

Դարձեալ մի հարուած. — հրամայուած է փակել „Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը", որ 21 տարուց ի վեր գոյութիւն ունէր Թիֆլիսում։ Փակել մի անմեղ հիմնարկութիւն, որ գրքերի միջոցով լոյս է տարածում խաւարի մէջ — որպի՞սի նախատինք մի կառավարութեան համար։ Արդեօք գալիցինական շահատակութիւնները սրանով պիտի վերջանա՞ն, թէ գալիքները պիտի լինեն աւելի զազիր, աւելի բռնապետական...

Է. ԱԿՆՈՒՆԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ԾՈՒՐՋԸ

ՌՈՒՄԻԼԻՈՒ ԵՒ ՊՈՒԼԿԱՐԻՆ. Թրանսվալի եւ Զինաստանի անցքերը դեռ տաքուստ, Ռումմնիս-պուլկարիոյ միջադէպը մէջտեղ կելլէ, որ պատերազմի այլասեռելու վախը կուտայ պատ մը:

Պալքանեան ծագ պետութիւնները, քաղաքականապէս եւ աշխարհագրօրէն սահմանափակուած են իրենց փառասիրութեան մէջ: Հազիւ արիւնով գնած ազատութիւնին ծերը ծգած պետութեան մը յաջողուկ բնագրով, սկսած են իրենց բոլոր լայնցնելու անհամբերութիւնը եւ աշխարհակալութեան ծգտումները ունենալ: Խաղաղութեան երեւոյթին ներքեւ այդ հատուկտոր պետութիւնները իրարու գնտակ կը նետեն եւ իրար բնաւ չեն քաշիր: Հասարակաց թշնամիին դէմ այնքան առելութիւն չունին որքան միմեանց դէմ. տուլթանը օգուտ կը քաղէ, անշուշտ, այդ վիճակէն, ծեծելով փոխիփոխ իւրաքանչիւրին ուսը եւ պաշտպանելով հակադարձ շահերը:

Քառորդ դարու մէջ, պուլկար ժողովրդին մէջ առաջ եկան այնպիսի խլրտումներ, եթէ կուզէք, շարժումներ եւ ձգտումներ, որ մեծութեան մասին ունեցող Անմէտ Ռիզան, սրտի ցաւով եւ մարդ սիրտը մատնանիշ կ'ընէր Թիւրք աշխարհին, երէկի իրենց բայա եւ համիդի, նախատօրէն, սիւտճի անուանած ազգին յառաջադիմութեան անուրանալի նշանները: Թիւրքերը, որոնք գիտեն գաղտնիքը ծրի եւ անաշխատ ուտելու արհեստին եւ որոնց կերկոխ փորոտիքը կը ներկայացնէ Ծըլտրզը, այդ անբարոյականութեան ախտը, ուր ինգէթի պէս եէգիտներ եւ Խանսին պէյի պէս բշոշլանդներ, երկիրը ծախու հանելու առեւտուրով զբաղած են, դեռ ցաւագին տգիտութիւնով մը չեն քաշիր իրենց ծուլութիւնը ազնուականացնել. իրենց քիւլան պէյի եւ փիսբերան սուլթանն ալ, արքայական սրախօսութիւն եւ վրէժ լուծած ըլլալ կը կարծէ պուլկարներուն սիւտճի եւ հայերուն այվազ ու էֆենտի անունը տալով:

Թիւրքիան հեգնել չգիտեր, քֆրել միայն գիտէ:

Ռումմնիա, եթէ երբեմն ապաստան կուտար պուլկար հայդուկներուն Դանուբի ձախ ափերուն վրայ, այսօր ոխէն ամնոը կը կրծէ իր դրացիին դէմ: Ամեն կողմէ սահման դրուած, չունենալով անմիջական յոյս Կարպաթներէն կամ Դանուբէն ու Փրուտէն անդին անցնելու, յոռի շրջանակի մը մէջ կը դտնուայ վարելով անգոյն եւ տմարդի քաղաքականութիւն մը, եւ ամեն կերպ խոշնդոտներ կը հանէ, որ Մակեդոնիան Պուլկարիոյ շմիանայ: Քաղաքականութիւնը յաճախ լուրջ պատճառներու պէտք չունի. երբեմն Փասբալի „աւազի տատիկն" ալ բաւ է մեծ պատրուակներ ստեղծելու: Ռումմնիա, պաշտպանելով Մակեդոնիոյ մէջ եղած ատի մը քրիստոնեաները՝ իբր ռումանացի, մակեդոնական հարցի լուծման մէջ գայթակղութեան խոշոր քար մը եղած է. սուլթանն ալ ուժ կուտայ այդ պատակտումին:

Կռիւը այսպէս խուլ բայց անդուլ կերպով կը քալէր, երբ նոր միջադէպ մը եկաւ երկու դրացի ազգերուն մէջ աւելի լայնցնել անդունդը:

Մակեդոնիոյ կոմիտէն, որուն կեդրոնն է Սոֆիա եւ որ կը վայելէ պուլկար ժողովրդին վստահութիւնը ու հանակրութիւնը, ատենէ մը ի վեր յեղափոխական գործի համար խաղաղ կամ բռնի միջոցով գող կը ժողվէր պուլկարաբնակ անխտիր ամեն հարուստներէ, որոնց մէջ կային շատ ռումմիներ:

Շատ չքներ, Պուքրէշ հրատարակուող Փէնինսուլա պալքանիքա թերթին տնօրէնը, Միխայէլիանս, ծագումով մակեդոնացի, բանգործ ըրած էր անխիղճ արշաւանք մը մղել Մակեդոնիոյ շարժման դէմ, ամբաստանել եւ ներան տալ անոր մարդիկը եւ պաշտպանել սուլթանի ըէժիմը: Մակեդոնացի երիտասարդ մը, չհանդուրժելով որ օտար մը այդքան սինիքօրէն իր եղբայրներուն թշնամութիւնը գետնէ գետին ծեծէ ու արբապղծէ իր ազգին հերոսներուն անմեղութիւնը, կերթայ Պուքրէշ եւ կրպասնէ իր հայրենիքի թշնամին:

Այդ սպանութիւնէն ամբողջ Ռումմնիան արտոտեցաւ. քիչ մնաց սիւթական արշաւանքի մը պէս Դանուբէն անդին նետուէին ռումմիները Պուլկարեան հողերուն մտնելու համար: Ռումմէն կառավարութիւնը ազդու ծանուցագրով պահանջեց որ մակեդոնիոյ կոմիտէին դէմ իր հեղինակ այդ եւ ուրիշ ոճիրներու խիստ պատիժ տնօրինի: Պուլկարիա այդ յոխորդանքներուն պատասխանեց նոյնքան ազդու եւ անվեհեր լեզուով: Պուլկար ժողովուրդը ոչ միայն մէկ թելը շոյաւ կոմիտէին, այլեւ ազգովին պատրաստեցաւ ռումմիներուն առաջ դաս մը տալու.

Դանուբի երկու ափերէն արդէն շանթեր կը տեղային եւ սահմանին վրայ առաջին թեթեւ ընդհարումներ եւ թնդանօթի փոխանակումներ եղան:

Կը վախցէր որ, Պուլկարիա, դեռ իր ազատութեան յաբէլեանը չտօնած, երկրորդ անգամ ըլլալով, զէնքի ուժով ըստիպուած ըլլար պաշտպանել իր պատիւը եւ ազատութիւնը: Բայց այդ պատիւները մէնմինակ չէին իրենց պայքարին մէջ, Հոմերի հերոսներուն պէս ամպերուն ետեւ պահուրտած հզօր պաշտպաններ ունէին:

Ռումմնիան ինչքան ալ հարուստ ու մեծ ըլլայ, սակայն չի յանդգնիր „տէսկալիկարէ" (էջը) մ'ընել դանուբի աջ ափը, ինչպէս որին Թրանսիլվանիոյ վոյվոտները, որոնք Կարպաթի անցքերէն իջնելով Մոլտավիան եւ Վալաքիան հիմնեցին:

Խնդիրը առանց պատերազմի պիտի խափանի. Եւրոպայի քաղաքին վրայ արդէն շափէն աւելի ըլլալով փորձանքները:

Դանուբի անհիւրընկալ եզերքներուն վրայ տեղի ունեցած անցքերը, կը թելադրեն մեզի որ բոլէ մը ետ դառնանք 96-ի օրերը, երբ ռումէն պետութիւնը, այնքան փոքրոգիօրէն, սուլթանի բարբարոսութիւններէն հալածախոյս թշուառ հայերուն երեսին խփեց իր դռները, հալածեց զանոնք իր երկրին մէջէն, ինչպէս նաեւ երիտասարդ թիւրքերը եւն: Ոչ մէկ ազգի մէջ տեսնուեցաւ այդքան դժնէ վարմունք մը դժբախտութեան հանդէպ. միակ կայէն պետութիւնն եղաւ աշխարհի մէջ, որ ոտնակոխ ընելով մարդկային սրբազան հիւրասիրութեան սկզբունքը, հայ ազգին փախստականները վտնեց իր երկրէն եւ շոր քար մը անգամ չի աւաւ, որպէս զի այդ թշուառները իրենց գլուխը հանգչեցնեն:

Սուլթանէն առանձին շնորհներ մուրալու անպատիւ մտադրութիւնով, մինչեւ իսկ փորձեց սուլթանին յանձնել փախստական հայերը, երբ Գարմէն Սիլվան Ռելիսաբէթ թագուհին) „երջանիկ Արկադիոյ" անտառներուն մէջ սոխակներու քնարներով կը սրաբբենար, իր թերահաւատ, անգոյն գթասրտութեան խորհրդածութիւնները ու ունայնութեան թափառիկ երազանքները յիշատակագրելով...

Ու դեռ կը պարծենան ռումէները, որ իրենք հին Հռոմի արժանաւոր շառաւիղներն են, անոր համար որ հին դակէացիները Տրայանոսի էգէօններուն ծուծը կոտրած են... Ինչ որ է, Բրուտոսի եւ Կատոնի արիւնը ամեն արիւնի հետ դիւրաւ չի մակրդիր: Եւ սակայն

They are honorable men.

Ամեն երկիր նկարագրի ուժեղ խազ մը ունի. Ռումմնիան մնացած է տափակ, մամալիգայի պէս անհամ: Այդ թելխած միջավայրի մէջ է, որ հոնի հայութիւնը, ազգային ճգնաժամին, չկրցաւ իր սրտին մէջ հին յիշատակները արթնցնող մաշթել մը գտնել. էն դժգոյն հայութիւնը, անհնարին բացառութիւնով, որ երբ Աւստրիոյ մէջ դարերէ ի վեր մայրենի լեզուին կորսնցուցած հայերը ազգային զգացումի սրտաշարժ պրկում եւ յօրանջում մը կունենային եւ կարօտով մը կնայէին „Մայր Արարատի", „Լուսաւորչական ռումէները" (այսպէս կ'անուանուին իրենք զիրենք Ռումմնիոյ հայերը, մեղմաբանօրէն), ցուիգա խմելով կը գինովային...

Եթէ իրաւ է, որ Տումպովիցայի ջուրը խմողը կը մոռնայ ամէն բան, ինչպէս տպարտօրէն կրսեն ռումէները, մենք չենք զարմանար, երբ հայերը իրենց ազգութիւնը ուրանան եւ ռումէն կառավարութիւնն ալ յաճախ մարդկային արժանապատուութեան բարոյական մեծութիւնը արհամարհէ:

Դժբախտաբար կամ բարեբախտաբար, ռումէն պետութեան բոլոր ծնրադրութիւնները, սէլամալէքները, ծառայականութիւնները, նոյնիսկ սիրայօժար անմարդավարութիւնը, սուլթանին հաճելի ըլլալու համար, յուսախարութիւն բերին եռեւնուն: Բայց Ռումմնիան միշտ կարող է մոհիթարիլ աշխարհի մէջ, ծամծմելով հին առածը.

Romoun no pere.

* * *

ՄԵԾ ՄԱՐԴԱՍՊԱՆԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ. Թրքական զարակէօզութիւնը կամ օսմանեան խորամանկութիւնը, որ սայլով կոխոյ նապաստակը, Համիդի յօբէլեանին խնդիրը մէջտեղ հանեց նախ՝ ահագին ընծաներ ծերք բերելու յուսով, յետոյ տգէտ եւ դժգոյն ժողովրդի աչքին Համիդի պատուոյն պատիւը վերահաստատելու համար:

Թիւրքերու տարեգրութիւններուն մէջ, օտարոտի քան է յօբելեանի գաղափարը, մանաւանդ անվայել է որ մարգարէին փոխարտիքը եւ ալլահի շուքը, աշխարհիկ հանդէսներու մէջ իր սրբազան, „անուշ ծուլութիւնը" սրբապղծէ:

Համիդ իրերու զօրով, կը խզէ առ աւանդութեան պարզութիւնը, հագնելով հարիւր հազարաւոր հայերու արիւնին մէջ թաթխած ծիրանին եւ աղաչելով Եւրոպային, որ գայ համբուրէ զայն:

Ուրեմն արեւելեան վեհապետը, որ եօթը պարիսներու ետեւ հարկմներու մթնոլորտէն միայն կը գինովնար, եւրոպականացաւ այն օրէն ի վեր, երբ քախտը, անագորոյն ժպիտով մը, հայերը

չարդելու ոճրագործ ե ա թ ա ղ ա ն ը դրաւ անոր ափին մէջ։

Բայց այդ մեծադղորդ յօրելեանը, որ դարէդար խնդալու զաւեշտ մը պիտի ըլլայ, վիժեց եւ հ ա ր ա մ եղաւ. երեք օր պիտի տեւէր՝ մէկ գիշեր տեւեց միայն։ Յօրելեանէն օրեր առաջ՝ քանտերը կը գրպին հայերով ու երիտասարդ թիւրքերով, վախնալով բ ա ր ե գ ա ս տ ի կ յօրելեանը խռովող միջադէպերէ ու ցոյցերէ։ Սպառնալիքներ եղան քաղաքացիներուն, եթէ իրենց տուները չլուսաւորեն, եւ յետոյ... սուլթան Համիդ, սարսափի պարսպին մէջ մենակերպած, ժողովրդի աչքին երեւալ չուզեց ոչ տամնտօրէն – որ իրեն համար այնքան զոհողութիւններ կ'ընէր, եւ արդէն ժողովրդի խուլ գիտակցութիւնը, որ չի ստեր, դառնացած կը մնայէր „նէ ալլահ վէ թէրպիյէսիզ փատիշահ"... Ճիշդ է որ թագաւորները քիչ կերեւան իրենց ժողովուրդներու աչքին, իրենց սրբազան խորհրդաւորութիւն մը տալու համար. Համիդ բնաւ չերեւար... պաշտպանելու համար, երեւի իմացեր է, որ վախը ստեղծած է կրօնները։

Իրեն շնորհաւորութեան գացող երկրի պաշտօնեաներուն ըսեր է.

„Ասուած պահպանէ մեր պետութիւնը եւ երկիրը։ Ցարդ, բարենպատակով աշխատեցայ եւ մինչեւ կեանքիս վերջը այս կերպով յաջողութիւնս կը հայցեմ նախախնամութենէն"։

Երկու միտք կայ մէջը, այս յուսահատօրէն եւ սինիքորէն լաւատես զուցէ եւ այլաբանական խօսքին մէջ։ Առաջինը՝ որ Համիդ, թէեւ ալլահին շուքը, հանգչած է թէ ինքը անմահ է եւ թէ մահը կրնայ Յելդիզի երկաթդռներէն ալ ներս թափանցել օր մը. յետոյ զարհուրելի սպառնալիք մըն է երբ կ'ըսէ, „մինչեւ մեռած ծրս այս կերպով յաջողութիւնս կը հայցեմ նախախնամութենէն", որովհետեւ մաքիա վէլուլեան մէջ միայն „բարի նպատակով" աշխատելու երեւոյթին ներքեւ էն զարհուրելի ոճրագործութիւնները սրդեցու սրբազան վարդապետութիւնը կայ։ Համիդի հեգնող շրջաբանութիւնը, որ գազան քնագրի մը շատ ծարտար մէկ դարձուածքն է, պարզապարզ կ'ուզէ ըսել „ծարաւի է անձն իմ արեան"։

„Փատիշահնըմ չօք եաշա" երեր է երկրին ճակատագիրը իրենց ուսերուն վրայ տանող բոլոր պաշտօնեայ ֆանթօշներուն միաբերան պատասխանը։ Ուր արեւը կենդանութիւն կը սփռէ, սատկած շուներուն մէջ որդ կը ձգէ, ենթադրելով Թիւրքիոյ էշին վրայ, քաղաքակրթութեան արեւին ներքեւ ծնած այդ փիս որդերը, որոնք փաշա, վէզիր, վիլէյէա եւ էն տիտղոսները ունին։

Զենք գիտեր, սուլթան Համիդի ո՞ր երեւելի գործին համար հնարեցին այդ յօրելեանը. անո՞ր համար, որ գահը նստելէն ի վեր ծեռք հանեց այնքան նահանգներ, կամ այն ահռելի ոճրագործութիւններուն փոխարէն, որուն արատը սրբելու համար, եթէ բոլոր միսիլման աշխարհը մէկ ըլլայ Թիւրքերուն հետ, նորէն չի յաջողիր մաքրել։ Յօրելեանը ծիծաղ, անարգանք հրաւիրեց միայն իր վրայ։ Տավուններու դողդոջը ու բռնի „չօք եաշա"ները, չի լռեցուցին աշխարհի վրայ թափառիկ, անգութ ծանը... „Մեծ Մարդասպանը"

Անգլիոյ Շնորհափառ թագուհին, ինքնագիր գրութիւնով մը սրտագին շնորհաւորեց իր վաղեմի բարեկամը։ Ան օրէն ի վեր, երբ Վիքտորիա թագուհին Թրանսվալի արիւնին մէջ լաց իր ծեռքերը, սուլթանին հետ շատ սիրով է։ Հեռուէն Ֆ ի լ ի ր ա կ ընեն։

Ռուսիոյ ցարը սուղ ընծաներ նուիրեր ան մեծագործութիւններուն համար, որով Համիդ հայաստանը պարպեց հայերէն։

Գերմանիոյ քայզէրը, իր գահաժառանգ տղան պիտի պատգամաւորէր սուլթանի յօրելեանին եւ սուլթանին փափաքն ատ էր. բայց վերջի պահուն, Վիլհէլմ, խորհելով որ սուլթանի ամենամեծ պատիւ մը կընէ, խոշոր փոխարինութիւն մը պահանջեր է։ Կը տեսնենք որ գերմանացիները օրի թաց տեղ չեն կորեր։ Քայզէրը երբ Երուսաղէմ գնաց „Ննջումն ս. Աստուածածնայ" հողը նուիրեցաւ իրեն. իր տղուն համար բաղձալի էր որ գտնէր գետին մը, որ ունենար սա անունը „Ննջումն Այիշէի"։ Վիլհէլմ, տնտեսագէտ մարդ, որ Բրուտոսի պէս աչքը գոց կը գայնէ իր սիրելի սուլթանին, – բայց Բրուտոսի համար ըսած է „նա մարդ էր" արեւելք ծամբորդութենէ քաղած նկարներու ա լ պ օ մ մը եւ քանի մը հատ իր ծեռքով շինած ծաքուտուք նկարներ պ ա հ պ հ ի շ որեր է։ Սուլթան Համիդ տեսնելով իր լուսաղբօր աններելի չ ի ն կ է ն ո ւ թ ի ւ ն ը, երբ ինք այնքան վնասանծնութիւնով առամանդներով, մարգարիտներով համբոյրի պէս. ողողած էր անոր կնոջ պարանոցը ու լանչքը, դառնութիւնով մը զանգատեր է ըսելով.

„Գոնարեղէնի հատիկ մը
Աւելի գին ունէր ինծի համար"։

Սուլթանը իրաւունք ունէր էրեւելու եւ աքլորին ծայնակցելու, երբ զինքը էշու տեղ կը դնեն. եւ մանաւանդ, Զինու դէպքերուն առթիւ, քայզէրը, Նասրէդդինին իշուն ետեւէն վազած դրութեան մէջ եղած ատեն, Գերմանիոյ „ածելիի պէս կտրուկ սուրը" ծեռքը կը պոռար, որ աշխարհի փրկութիւնը քրիստոնէութեան մէջ էր. եւ այս խօսքերը կուղղէր իր սուլթան աղբօր, որուն փիս երեսը պաչեց եւ երեք հարիւր միլիօն... միսիլման բարեկամներուն, ինչպէս բաւեց Շամը Շէրիֆի մէջ։ Գերմանիոյ լրագիրները զուցէ այդ պարապը ծրի լցնելու համար էր, որ ամենաշռայլ ներբողներով օծեցին Համիդը, որոնց առջեւ Պօլսոյ մամուլն անգամ ամօթահար կը մնար։

Սուլթանը Եւրոպայի ներկայացուցիչներուն իր փէշը հանբուրել տալէն ետքը, փառաւոր արքայաճաշ մը տուաւ — հոգու հացկերոյթը իր զոհերուն ուր 130 հոգի կերան խմեցին „կեանքի սեղանին վրայ"... եւ տաքտաք շնորհաւորութիւններ ու „կենաց"ներ ըրին աշխարհի էն չարագործ քանաւորին։ Սուլթան Համիդ ոչինչ խնայած էր իր հիւրերուն համար, որոնք հ ո ւ բ ի ն ե ր ու աշխարհին մէջ, ուր „բարի ու չարի գիտութեան ծառը" խնթատատօրէն կը բուսնի, իրենց երկրին մէջ երազնին անգամ չտեսած առասպելային ծրի ծրի բէյֆեր ըրին։

Երբ երաժշտախումբը անոնց ջերուն կուտար հեշտագին թրթռումը, իւրաքանչիւր պետութեան ազգային երգը գոռացնելով, քիչ մը անդին մեռելներ կը թաղէին։

„Ինչ մարդիկը իրենց ըրածին զգացումը չունի՞ն, որ հողը բացած ատեն կ'երգեն"։

Այսպէս կ'ըսէր հավէտ անզգայ հողը փորողներուն։

Ճիշդ է, Յելդիզը, եղեռնային մթութեան մէջ, բոպէի շողիւն մը ունեցաւ, ուր Փարաւոնի նիհար հասկերը կուլ տուին թշւառ ժողովրդին պատառ մը հացը եւ խնդալով տեղացան. այժմ որքա՞ն խաւար է Յելդիզը, փայլակոտ լուսաւորութենէ մը ետքը...

Քանի մը օր յետոյ, Փրանսայի երեսի. ժողովի նախագահը պ. Տէշանել եւս այցելեց Համիդին, արեւելքի մէջ Փրանսայի կորսնցուցած փառքը գտնելու համար, զոր արդէն գտած էր հայր Շարմթան։ Սուլթանը անոր ընծայեց թանգ գորգերու հետ ուրիշ քաներ, եւ յայտնեց թէ որքա՞ն կը սիրէ Փրանսան... բայց մոքէն կըսէր, ինչ որ ըսաւ Յուգուրդա հոռմի ծերակոյտին։ Կոլուսայի աքաղաղը Յելդիզի վրայէն կուկուլիկու ծանեց ու թռաւ... պաշտիշներով ծանրաբեռնուած, որոնք հանօթոյի բերնի ջրերը կընային քամել։

„Այո՛, այս ապական աշխարհի մէջ,
Ոճրագործութեան ոսկեզօծ ծեռքը
Կարող է դէն մղել արդարութիւնը,
Եւ յաճախ կը տեսնենք նոյնիսկ անօրէն վարձը
Ծախու կառնէ օրէնքը"...

Հա՛պա, հայերը ի՞նչ հաշեցան, պիտի ըսի։ Անոնք բանտերուն մէջ գացին տօնել իրենց ա մ ե ն ա ս ի ր ե լ ի փ ա տ ի շ ա հ ի ն յօրելեանը։ Օրմանեան պատրիարքը պ. Տիգրան Ներսէսեանի ծեռքով Տիքիլի թաշին ազգի մանրանկարը նուիրեր է Համիդին, իբր... կոթող մը անոր քաշագործութիւններուն, եթէ հեգնութիւն մը չէ. – զի Օրմանեան թէեւ ինք պ ա ր զ, բայց երբեմն քարակ ալ մանել գիտէ։ Հ ա յ ր ա խ ն ա մ սուլթանը, պատրիարքարանի Ա. գործակատար Տիգրան էֆէնտի Ներսէսեանի Ուլլայի Բ. աստիճանը շնորհեր է։

Հայ ազգը երջանիկ է։

Տիգրան էֆէնտի, Օրմանեանի քրոջը հետ կը կազմեն, Ադամ լեզուով, „մարմին ի մարմնոյ"։ Նոյնն է պատրիարքարանի մէջ ինչ որ է հազարդիւտ անասունը, Խորէն էֆէնտին, Էջմիածնի մէջ։ Երկուքն ալ ան մեղքերէն են, որոնցով երբ հայ մայրերը ծոցվորին, կ'ըսեն, „մեղքէ կուշտ" են։ եւ երբ ծնին՝ մորերնուն տղաքերքի ցաւը ազգին քաշել կուտան ապազային։

Երջանիկ է ազգը։

Սուլթանի ամբոխը շլացնելու խաբեայ եւ ազգադաւ միջոցները շատ չեն տեւեր։ Կուգայ օր մը, երբ ժողովրդին յուսահատ վրէժխնդրութիւնը եւ յուսախաբութիւնը գահին աստիճաններէն վար կը գլորէ այդ չարագործը, որ երբէք չի ճանչցաւ արդարութեան „գոյութեան իրաւունքը"։ եւ Յելդիզը, այդ ոճիրներու միջնաբերդը, քանդելով տեղը աղ կը ցանէ։

Արդ, Թիւրքիոյ դժբախտ ժողովուրդները ահուսարսափի եւ ցոփ ռէժիմէն երբ յաջողին ս է լ ա մ է թ ելլել եւ իրենց հարցի թէ ի՞նչ ըրին սուլթան Համիդի օրով, հատիկ պատասխան մը կայ տալիք, Սիէյէսի պատասխանը.

— Ողջ մնացինք։

Թ Ե Ր Թ Օ Ն

ԿՌԻԻ ԴԱՇՏՈՒՄ

Նա էլ ընկաւ։

Կռիւն անողորմ էր. Հազարաւոր մարտիրոսների աղաղակող վրէժն էր խօսում Հայդուկների հրացան-

ների փողերից, որոնց որոտը ինչ որ կենդանի, խօսուն բան ունէր իր խրոխտ արձագանքների մէջ, զայրոյթի մի շեշտ, բողոքի մի հնչիւն: Խաւարն ակօսող բոցերը ձգւում էին առաջ, դէպի թշնամին ինչպէս զայրացած օձեր, վայրկենաբար լուսաւորում էին մի յանդուգն ու մռայլ դէմք, ապա մարում մի թշնամու կեանքի հետ: Ի՞նչ էր կատարւում խաւարի մէջ, այդ դժւար էր իմանալ, պարզ էր միայն, որ երկու կողմից էլ կռւողները ընկնում էին — քրդերը անէծքով ու ոռնոցով, իսկ հայդուկները լուռ ու հպարտ և կռւի դաշտը մի մահասարսուռ ճշտութեամբ կլկնում էր հրացանների որոտները, կարծես այդ ձայները նախկին նահատակներին հաղորդելու խորհրդաւոր պարտքն էր յանձն առել նա:

Նա էլ ընկաւ, մենա՜կ, հեռաւոր սարալանջի վրայ, և միայն երկինքը տեսաւ, թէ ինչպէս ընկաւ այդ անվեհեր տղամարդը, որ կռւի բոլոր ժամանակ վազում էր առաջ և կարծես բոլոր ընկերներին անծանօթ, ամէնքին անյայտ մի բան էր փնտռում հէնց թշնամիների շարքերում: Իզուր անցան ընկերների յորդորները, խրատները ու աղաչանքը նրան յետ պահելու համար, իզուր անցաւ նաև խմբապետի հրամանը. նա գնում էր առաջ անընդհատ և նրա հրացանի պայթիւնը լսւում էր միշտ թշնամիների առաջին շարքերի մօտ, ուր նա մահ էր սփռում, առանց մահ գտնելու:

Վերջապէս նա էլ ընկաւ և փակեց աչքերը մի երանաւէտ անուշութեան մէջ, որ տալիս է մարդուս նուիրական գործի գիտակցութիւնը և դառն իրականութեան յաւիտենական մոռացումը: Երկար մնաց նա այսպէս և երբ աչքերը բացեց, էլ չէր յիշում, թէ ինքն ո՞ւր է և նոյնիսկ ի՞նչ է ինքը: Գլխի փոխարէն նա մի ծանր ժայռի կտոր ունէր, ուր մարել էին բոլոր յուշերը և ուր իշխում էր այժմ անցեալի, ներկայի, գուցէ և մօտաւոր յաւիտենականի մի զարմանալի ժխոր, միայն չռած աչքերը դեռ նայում էին վեր, նայում էին առանց տեսնելու, միտքն անկարող էր այլևս արտաքին տպաւորութիւններից պատկերների ամբողջութիւն կազմել. կուրծքն էլ էր ծանր, այնտեղ սառն արձիձի մի գունտ կար դրած կարծես, որ անընդհատ ճնշում, ճնշում էր հազիւ թրթռացող արիւնոտ սիրտը: Երկար մնաց նա այդպէս անշարժ դէպի վեր, դէպի անհունութիւնը նայելով, ուր երկինքը գունատ, պաղ ցոլքերով թարթում էր իր անգիտակից աստղային աչքերը, ճիշդ ինչպէս մահամերձ վիրաւորի սառած աչքեր. և ոչ մէկը միւսին չէր հասկանում:

Ժամեր անցան. լուսաստղը բարձրացաւ լերան թիկունքից և առաջանում էր կոյսի մեղմ, երկչոտ, բայց գրաւիչ ընթացքով. ծիր խաւարմանը գունատւեց, աղոտացաւ և միւս աստղախմբերը կամաց կամաց կախուեցին դէպի արևմուտք: Նայում էր վիրաւորն այս բոլորին և չէր տեսնում: Հեռո՜ւ, հեռո՜ւ, լերան միւս կողմից լսւեց մի փոքր ձայն, որ տխուր, յուզիչ ոլորներով տարածւեց լուռ դաշտի վրայ և կարծես խօսում էր արիւնաթաթախ դիակների ականջին: Այստեղ սարալանջի վիրաւորին էլ հասաւ այդ ձայնը, նա էլ լսեց... և յանկարծ ինչպէս մի մոռացած երազ, հին օրերի աղօտ յիշողութիւն, մի բան զարթեց նրա գլխում, մտքի խաւարի վրայ լուսոյ մի շող ցոլաց: Փողը շարունակում էր հնչել և նա ականջ էր դնում... ապա կամացուկ շարժեց կրծքի վրայ ընկած ձեռքը և հանդարտութեամբ տրորեց աչքերը. նա այժմ ականջ էր դնում, ջանք էր անում հասկանալ, թէ ի՞նչ է այդ ձայնը, ո՞ւր է ինքը. փողը շարունակում էր հնչել աւելի և աւելի ուժգին. նա նորից տրորեց աչքերը... նայեց... այժմ հասկանում էր... այդ ձայնը նրան ծանօթ էր, լսել էր առաջ, մարտադուլի հրաւէրն էր, կուիւը վերջացել էր, կանչում էին ընկերներին, մոլորուածներին, կանչում էին նոյնիսկ վիրաւորներին, եթէ այդ հնար էր: Կամաց կամաց նա յիշեց բոլորը, յիշեց կատաղի կուիւը, կոտորածը. յիշեց, որ ինքը շարունակ մենակ առաջ էր վազում. յիշեց, որ վերջին անգամ այստեղ, լեռնալանջի վրայ մուրճի պէս մի բան դիպաւ իր կրծքին և ինքը վար ընկաւ անզգայ: Նա հասկացաւ, որ ինքը վիրաւոր է, ծանր վիրաւոր և մենակ ձգւած դաշտում. զգաց, որ հրացանը պինդ սղմել է կրծքին և իր ամբողջ մարմինը լողում է գաղջ, պրծուն հեղուկի մէջ, որ հոսում էր վէրքից. դանդաղ արիւնաքամ մահը մօտենում էր: Նա փորձեց շարժուել, բարձրանալ. վիրաւոր թռչնի պէս ցնցւեց, բայց իզուր, գլուխը ծանր էր, կուրծքը ճնշւում էր, իսկ թիկունքը մրսում էր սրեան մէջ ճապաղած:

„Ինչո՞ւ վեր կենալ, մտածեց նա, մէկ չէ՞ այստեղ, այսօր, կամ մի ուրիշ օր, մի այլ դաշտում“. ապա հանդարտ ձգւեց իր տեղում սպասելով անխուսափելի ճակատագրին, որ գալիս էր մահու կիրպարանքով Այժմ վերջին անգամ մէկիկ մէկիկ անցնում էին նրա գլխում իր անցեալը, իր յուշերը, երիտասարդ կեանքի հազար ու մի յեղյեղումները: Կամաց կամաց հին պատկերները բոլորն էլ աղօտացան, կորան և մնաց մի կոյսի չքնաղ պատկեր, որ իր բոլոր գրաւչութեամբ կանգնեց նրա առաջ. այդ նրա սէրն էր, իր միակ և անբիծ սէրը: Այդ սիրոյ վերյուշը ամենից քաղցր էր և նա աշխատում էր էլի մի քանի վայրկեան պահել իր թուլացած յիշողութեան մէջ այդ աղօտ, եթերային պատկերը, որ կարծես մօտ էր միւսներին հետևելու, մօտ էր հեռանալու, կորչելու խաւարի մէջ ընդմիշտ, յաւիտեան: Նա շտապում էր վերջին անգամ վայելել կեանքը անցեալի յուշերի աշխարհում, երազների պարգևած վաղանցուկ երանութեան մէջ: Դա մի վսեմ վայելք էր, որ նա իրաւունք էր համարում ճաշակել վատաբախտ հայրենիքի փրկութեան սեղանի վրայ զոհերից վեհագոյնը՝ կեանքի զոհը բերելուց յետոյ:

Բախտը, կոյր պատահականութիւնը չէր, որ նրանց միևնոյն ճանապարհի վրայ դրեց, այլ թշւառ ազգի ցաւերի խորին գիտակցութիւնը և այդ ցաւերն ամոքելու առաքինի վճռականութիւնը: Այսպէս պատահեցին նրանք իրար սահմանագլխի վրայ. Գունատ, փոքրահասակ աղջիկ էր նա, չգիտես ինչ մի անհանգիստ, բոցոտ բան ունէր իր հոգու մէջ, որ անկարող էր կրել նրա թոյլ, նեղ կուրծքը, որ մղում էր այդ թուլակազմ, կանացի մարմինը հեռու իր ծննդավայրից, հեռու կեանքի հեշտութիւններից դէպի մի փշոտ ապագայ և ծանօթ հոգիների առաջ զեղվում, դուրս էր թափւում կրակոտ բառերով: Այն խղճուկ, հիւանդ կրծքում մի ամբողջ ժողովուրդ էր ապրում իր ցաւերով, իր անլուր տառապանքներով:

Միւսը՝ ժողովրդի զաւակ, դեռ այն տարիքում, երբ վայելքները, կեանքի քաղցրութիւնները պաշարում, շրջեմեցնում են երիտասարդ գլուխները, երբ կեանքը՝ վարդ

և ցաւը՝ ցնորք է թւում։ Եւ սակայն նա ծնուած չէր երիտասարդական վայելքների համար, շատ վաղ կնճռուեց նրա բաց, ազնիւ ճակատը հայրենիքի աղէտներով, շատ վաղ հասկացաւ մեծ զոհի խորհուրդը և գնաց այնտեղ, ուր տանում էին նրան անհանգիստ սրտի նուիրական մղումները։ Այսպէս պատահեցին նրանք իրար։ Եւ առաջին իսկ վայրկեանից հին ծանօթներ էին, հոգիների նմանութիւն կար. երկուսի մէջ էլ ապրում էր տանջուած ժողովուրդը, երկուսն էլ ողողուած էին խեղճերի արցունքով. երկուսն էլ ապրում էին միևնոյն ցաւերի կսկիծով։ Տեսան և սիրեցին իրար, ամէն մէկը միւսի մէջ սիրեց իր վիրաւոր, արիւնաքամ հայրենիքը, իր փայփայած իդէալները. սիրեց մեծ ցաւը։

Վիրաւորն այժմ յիշում էր, կարճ եղաւ այդ սէրը և ինչպէս մի լուսաւոր մոլորակ անցաւ նրանց մտայլ հորիզոնով։ Արշաւանքից մի քանի օր առաջ էր, մի աստղազարդ գիշեր նրանք անցկացրին մի քանի ժամ մենաւոր ուռենու սաղարթների տակ. գլուխ գլխի տուած՝ նրանք խօսում էին կեանքից ու վայելքից, նրանց ձայների մեղմ հնչիւնները խաւարի և առանձնութեան մէջ գուրգուրիչ էին. տաք, անհանգիստ շնչերը խառնւում էին իրար և ձեռքերի հպումը ախորժ դողով ցնցում էր կենսաթից, երիտասարդ մարմինները. երազ էր և երազներից ամէնից գրաւիչը, որ նրանց օրօրում էր իր խաբուսիկ, բայց քաղցր մոռացութեան մէջ։

— Լսիր հոգիս, ասաց երիտասարդը, ինչո՞ւ մենք էլ չենք կարող ընդմիշտ միասին լինել, մինչև յաւիտեան և սիրոյ երջանկութեան մէջ կեանքը վայելել ինչո՞ւ...

Ձայնը վշտի շեշտ ունէր, երիտասարդ կեանքն էր խօսում։

Ընկե՛ր, դեռ շատ և շատ այսպիսի սէրեր պիտի զոհ բերուին աւելի մեծ սիրուն, պիտի կուլ գնան մեծ չարիքի անդունդը լցնելու համար և այն ժամանակ միայն թող սիրեն ուրիշները, իսկ մեզ, հոգիս, վիճակուած է սիրել նրանց սէրը. այդ է մեր երջանկութիւնը և առաջիկայ արշաւանքը հէնց դրա համար է։

— Արշաւանքը... Հա՛, արշաւանքը, մոռացար երիտասարդը քնից արթնցածի պէս, բայց խօմ մարդ անպատճառ չի մեռնում արշաւանքում, արշաւանքից յետոյ...

Նա չկարողացաւ աւարտել խօսքը, վերևում ծառի սաղարթների մէջ մի ճնճղկան օրհասական ծվծվոցը լսուեց, որով նա օգնութիւն էր աղաղակում իր դահիճի ճանկերի մէջ. բայց ո՞վ պիտի տար օգնութիւն. թառած թռչունները լուռ էին. կծկուած և այդ մի հատիկ ճիչը կորչում էր խաւարի և լռութեան մէջ. կամաց զոհի ծվծվոցը մեղմացաւ, թփրտոցը դադարեց և մի քանի խղճուկ փետուրներ մեղմով ընկան երկու սիրահարների գլխին։ Մի առ ժամանակ նրանք լուռ էին։

— Այսպէս են անում այն տեղ, ասաց աղջիկը.

— Այո՛... այսպէս են անում... մոռացար երիտասարդը. երազը, երջանկութեան ցնորքը ցնդեց, մնաց դառն, խեղդող իրականութիւնը և նրա հետ այնուամենայնիւ մի քաղցր յիշատակ վայրկենական անխառն երջանկութեան։ Այդ մի հատիկ վայրկեանի յիշատակն էր, որ անցաւ սարալանջի վերաւորի գլխով և երջանկութեա՞ն թէ՞ ցաւի արցունքի երկու խեղճ կաթիլներ ցայտեցին նրա աչքերից։

Պատկերները փոխուեցին։ Գիշեր էր. մի ժամից յետոյ ճանապարհ պիտի ընկնէին. խումբը բաժանւում էր տասնեակների, յիսնեակների, հարիւրեակների. հայդուկները զնում, փորձում էին հրացանները, զնդացնում ոռնամանների կապերը, մէջքերի կապոցները։ Երիտասարդն իզուր էր փնտռում բարի երթ մաղթողների մէջ նրան, որին գուցէ այլևս երբէք տեսնելու չէր։ Նա զարմացաւ և անհանգիստ հոգով ինքը գնաց վերջին մնաս բարեաւն ասելու։ Դռան առաջ նա կանգ առաւ, կարծես վախենում էր ներս մտնել, տխուր նախազգացումը ճնշում էր նրա սիրտը և նա մի վայրկեան ականջ դրեց... ձայն չկար. քնա՞ծ է արդեօք... դուռը սղմեց, բաց էր... ներս մտաւ և քար կտրեց... սիրած աղջիկը ձգուած էր անկողնի վրայ անկենդան, մի ձեռքում ջղաձգաբար սղմած փոքրիկ ատրճանակը և միւս ձեռքը անկողնից թոյլ թոյլ ցած էր կախուել. քունքի վրայ բացուած վէրքը պարզում էր ամէն բան։ Նա վերջ էր տուել իր կեանքին, բայց ինչո՞ւ. երիտասարդը շուրջը նայեց, սեղանի վրայ փոքրիկ լապտերի առաջ մի բաց նամակ կար ուղղուած իրեն։

„Սիրելիս, գրում էր նա, արիւնովս եմ գրում այս տողերը. մի քանի ժամից յետոյ դու անշուշտ մեկնելուց առաջ ինձ տեսնելու կրգաս մնաս բարեաւ ասելու և այն ժամանակ ինձ այլևս կենդանի չես գտնիր։ Մի անիծիր ինձ, հոգիս, ես քեզ սիրեցի այնպէս, ինչպէս երբէք մի կին չի սիրել մի տղամարդի, որովհետև դու սիրում էիր մեր վատաբախտ հայրենիքն այնպէս, ինչպէս գուցէ ոչ ոք։ Ցիշեր սակայն անցեալ օրը մեծաւոր ուռենու տակ քո արտասանած վշտոտ խօսքերը՝ „ինչո՞ւ մենք էլ չենք կարող ընդմիշտ միասին լինել“... խոստովանիր, որ դու կարծես ցաւում էիր մեր անջատման համար, ցաւում էիր, որ գուցէ մահը յաւիտեան խլի մեզ իրարից։ Թուլասրտութիւնը, վատութիւնը չէր, որ քո մէջ խօսեց, օ՜, ոչ. հազար անգամ ոչ, այլ երիտասարդ կեանքը, նա, որ իր իրաւունքներն ունի և երբեմն ուժեղ հոգիներում անգամ վսեմ պարտքի գիտակցութիւնը կարող է թուլացնել։

„Սիրելիս, հայրենիքի փրկութեան համար մղած նուիրական կռուում, գուցէ դու յիշելով ինձ, մի վայրկեան թուլանայիր. գուցէ խնայէիր կեանքդ ինձ համար, մեր ազգայ երջանիկ կեանքի համար և կամ գուցէ յետ յետ նայէիր և մէջքիդ գնդակ ընդունէիր, կամ հայրենիքի սէրը ստորադասէիր իմ սիրուն, մոռանայիր այնքան արիւնն ու արցունքը, այն ծով ցաւերը, որոնք մեր սրտերը միացրին, մեր բուռն սիրոյ նուիրական շղթան կազմեցին։ Իմ անզուգական ընկե՛ր, մի՛ մեղադրիր ինձ, ես չէի կարող այդքան ծանր ոճիր բարդել իմ խղճի վրայ, իմ գոյութիւնն այնքան յանցաւոր դարձնել, այդ բեռը կը խեղդէր ինձ, ես չկամեցայ անտէր, հեծեծող ժողովրդից խլել մի օգնող ձեռք, չկամեցայ խլել նրանից մի մեծ սիրտ, որ ծնուած է նրա ծոցից, հետևապէս նրա համար պիտի բաբախի և ոչ մի կնոջ։ Ի՞նչ ասել է մի կին, երբ հարիւր հազարաւոր անարգուած կանայք, ամէն օր արիւն արցունք են թափում։ Օ՜, մեր այս սև օրերում, տառապանքի այս արիւնոտ շրջանում ոճրագործ է այն կինը, որ մի աղամարդ կը խորթացնի ապաբախտ հայրենիքից, թշուառ ժողովրդից. այդ

ոճիրը ես չկամեցայ գործել. մի՛ անիծիր ինձ հոգիս։

„Ես վերջ տուի իմ կեանքին. քո ձեռքն ու սիրտն ազատ թողնելու համար, ո՞վ գիտէ, գուցէ դա միակ ծառայութիւնն է, որ ես կարող էի մատուցանել իմ դժբախտ ազգին։ Քո սիրուն միայն այսպէս կարժեցի արժանի լինել, այլապէս մի՛ տ, երբ կ'իմանայիր, որ ընկերներդ մէկիկ մէկիկ ընկել են սրբազան կուռ դաշտերում և դու դեռ ապրում ես մի կնոջ համար, ո՞վ գիտէ, գուցէ ամօթով ծածկուէր ճակատդ, գուցէ և անիծէիր ինձ։

„Այսպէս, գնաս բարեա՛, յիշիր, որ ես այլևս չկամ, կայ միայն Հայրենիքն իր բիւր ցաւերով, իր ծով արցունքով։ — Գնա՛ս, բարե՛ա՛...

Նա ծալեց նամակը, դրեց ծոցում, վերցրեց լապտերը, մօտեցաւ դիակին և երկա՛ր, երկա՛ր նայում էր այդ գունատ դէմքին, այդ սիրուն կուսական ճակատին, ուր արիւնն ու թաւ խոպոպներդ սև ու կարմիր պսակ էին կազմել։ Ապա կռացաւ մի երկայ համբոյր դրոշմեց նրա սառած շրթունքներին և դուրս գնաց։

Եւ այժմ նա ընկաւ կուռ դաշտում այնպէս, ինչպէս կը կամենար իր սիրած աղջիկը, որի պատկերը կանգնած էր նրա առաջ և կամաց կամաց հեռանում, մաշւում, եթերանում էր և մօտ էր չքանալու։ Վիրաւորն իզուր էր աշխատում բռնել, պահել այդ դիւթիչ պատկերը։ Նա աղօտանում, փախչում էր։ Դարձեալ մի քանի րոպէներ անցան, սիրած պատկերն իսպառ չքացաւ, նրա աչքերը մեղմութեամբ փակուեցին։

Եւ վերջին անգամ սարի միւս կողմից փողը կանչում էր ընկերներին, մոլորուածներին, վիրաւորներին. բայց ձայնն այլևս անկարող էր զարթեցնել սարալանջի վրայ մենակ պառկած երիտասարդին. նրա տխուր եղեգները տարածուում էին մռայլ դաշտի վրայ և հնչում էին որպէս օրօր Հայրենիքի փրկութեան նահատակին, որ քնեց յաւիտեան։

ՂԱՐԻԲ

ՆԻՒՐԱՏՈՒԹԻՒՆ

ՆԱԻԱՀԱՆԳՍՏԻ կոմիտէն ստացած է՝

ԱՊԱՍՏԱՆԻ ԱՊԱՌԱԺ գիւղի 1899-1900 տարւայ տարեվճարը. — Հ. Ս. 15 ռուբլի, Ե. Կ. 15, Գ. Ա. 10, Ե. Գ. 5, Ն. Ս. 3, Ե. Ս. 7, Մ. Փ. 9, Ե. Ա. 5, Դ. Ե. 2, Ե. Թ. 2, Ե. Ա. 3, Գ. Գ. 2, Ե. Ա. 2, Ե. Ա. 20։ Գումար 100 ռուբլի։

„Արծրունեաց" խմբի 1898-99 տարւայ հաշուէն մնացած փողը՝ 54 ռուբլի 75 կոպէկ։ ԱԿՈՌԻ գիւղի 1899-1900-ի տարեկան նուիրատուութիւնը՝ Ս. Ք. 5, Ղ. Ա. 3, Ն. Ա. 4, Ժ. Ք. 5։ „Բագրատունեաց" խմբի 1899-1900 տարւայ տարեվճարը 36, անցեալ տարւայ հաշուէն մնացած 2։ „Արշակունեաց" խմբի 1899-1900-ի տարեվճարէն 18, 1900-1901-ի տարեվճարէն 21։ ԱՐՏԱՇԱՏ գիւղի 1899-1900-ի տարեկան նուիրատուութիւնը՝ Կ. Ա. 4, Կ. Գ. 8, Մ. Կ. 3։ „Մամիկոնեանց" խմբի 1898-1899-ի տարեվճարներէն մնացած 18, ՇԱՒԱՐՇԱՆ գիւղի տարեվճարներէն՝ Պ. Թ. 8, Կ. Ս. 8, Ս. Ք. 6, Կ. Ք. 4, Ս. Ե. 5, Մ. Ա. 6, Ե. Ա. 3. 50, Պ. Ա. 5, Ս. Զ. 6, Կ. Զ. 6, Ս. Զ. 0. 50, Գ. Գ. 2, Մ. Ա. 6 ռ։

ԳԱՂԹԱՎԱՅՐԻ մասնաճիւղէն հնաշիւ 1899 թուականի ստացուեր է՝ ՔԱՐՈՒ գիւղէն՝ Կարապետ Շահանեան 79 ռ։ ԿԱՍՄԻՐ գիւղից՝ Տէր-Վրէժ 25, Նրուանդ-Ադիւն 20, Շանթ-Վահրամ 10 Խորաւոր 10, Ալիսալան 5, Աւետիս 1։ ԼԵՌՆԱՊԱՏԻ „Սէր" խմբից՝ Ե. Ս. 13, Ե. Ե. 12, Մ. Գա. 10, Պ. Գ. 10, Պ. Ղ., Ե. Ք., Մ. Ք., Ս. Ք., Գ. Մ. 5-ական, Մ. Ռ. 4., Ե. Պ. 3. Գ. Ռ. 3, Պ. Մ. 2, Ա. Ք., Պ. Ա., Գ. Ալ., Ե. Ա., Ա. Ա, Մկ. Ք. մէկ-մէկ, Ն. Ք. 1. 50, Մ Մ. 50 կոպ., Պ. Ն. 50 կ., Գ. Ք. 40, կ., Ա. Դ. 20 կոպէկ։ Ընդհանուր գումար 588 ռ. 75 կոպէկ։

ԴԱՇՏԻ կոմիտէն 1899 ապրիլ 1-ից մինչեւ 31 դեկտեմբերի Աղաջան 9 ռուբլի. Տիգ. Խոզ. 1. 75, Միսակ 1. 50, Ցոքիկով 6, Թիւլէկով 9, Գոռնակ 9, Վրէժ 9, Հայրիկ 8, Թէրզիեան 8, Համի պապա 4. 50, Խելացի 18, Մէլիք 4. 50, Հաւակրող 2, Պետրոսեան 9, Փերուկ 4. 50, Ազատեանց 4. 50, Լուսոնցի 4. 50, Գուրգէն, Սոխակ, Ռշտ. Բ., Նազարեան, Ոսկերիչ, Լոյս, Արեգակ, Ազիզ, Ստեփանեան, Սէմէրճեան, Աղամեան, Զարէոս 9-ական, Գուրէն 2, Արէս 3. Պարոյր 6, Վրդպետ 18, Մանուշար 2, Թաթուլ 27, Փափազ 2, Վիթխար 45, Ուզատասէր 12, Խորէն 3. 60, Շեփորուկ 7, Աշոտ Բ. 6, Ազգավառ 1, Աշոտ Բ. 3, Արծիծ 50, Շիշման 10, Ղառայ Մէլիք 2, Զնէէն 10, Տէր որդի 2, Հայրիկի որդի 11, Նորազատ 1, Շէրօ 5, Արմենակ 2. 50, Իսրայէլացի 2. 50, Նիխախցի 1, Այվազեանց 2, Խաչան 1. 50, Լաւագ 25, Հ. 5, Էքսթըրայ 25, Ա.Լ. քաղաքից՝ " 10, Երկրագործ 10, Ցորեն 25, Վանին 15, Հոգեսէր 5, Պ. Գիր. Ս.-ի կողմից 25, ՍԵՒ ՔՈՒՐ քաղաքից՝ Գ. Ե. 25, ԴԱՇՏԻ Աւետիքի հասոյթ 29. 25։ Ընդհանուր գումար 648 ռուբլի 10 կոպէկ։

ՎՐԷԺ կեդր. կոմիտէն՝

Շահրուդից՝ " 24 ստացականով Պետրոսի միջոցաւ 100 դրամ, նոյն մարդու՝ " 25 ստացականով ընդ-Կարապետ մէջ, Բալբաջան, Թունի, Ն. եաւցի 100-ական դրամ, Մելիք Շահնազար 80, Մ. Գրիգորեան 60, Սափար, Վանի, Ղուլի 50-ական, Երեմեայ 25, Ղահրաման, Մի Ոմն 20-ական, Պետրոս 24. 50, Գրիգոր 13, Ղարաբաղցի 12. 50, Լեւոն, Խաչատուր, Թամիր 10-ական, Քանարաձագից՝ 26 ստացականով Շիրակ 55, Կարապետեանց 50. Երնջակեանց, Նասրէան, Նանաջանեանց, Մարխանեանց 20-ական, Մովսէսեանց 15, Աւետիսեանց, Մ. Ն., Նասիրեանց, Աւօն, Շաքարեանց, Խ. Գ., Մահ, Պ. Մ. 10-ական, Էյվազեանց, Ա. Մ. Մ., Քառասուն, Ե. Մ., Խ. Տ. Դ. 5-ական։ Ընդհանուր գումար 305 դրամ։

Ղազվինից՝ 27 ստացականով Սախալինցու միջոցաւ Թո 50 դրամ, Զիլ-Արգուից 50, Ղազվինի տուն 30, Քաղաքացի 30, Ոմն, Բարերարից, (իսկական) Պարսիկից, Վարդ 20-ական, Սուրմակեանց 15, Ե. Շահնազար 15, Մարտիրոս, Բանտուտ, Ոմն, Ցովակիմ, Փիր-Աբազարից, Ա-Սարեցի, Ոմն, Բաղշայ՝ Մ. Ռ., Ոմն, Մաշատի, Ժայռոտ-Գիւղացի, Մուգուզ, Ց. Սախալինցի, Ցովնաթանեանց 10-ական, Կարսեանց 3, Հատի 2, Ասքանորդցուց 5, մի Ներկայացումից 406 դրամ։ Գումար 836 դրամ։

ՅԱՒԵԼԻԱԾ

ՊԱՏՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ „ՊԱՏՒՈՑ ԱՏԵԱՆԻ" ԽՆԴՐԻ ԱՌԻԹՈՎ

(ՏԵՍ „ԴՐՕՇԱԿ" 2-ի եւ № 3-ի ՅԱՒԵԼԻԱԾՆԵՐԸ)

Ի նկատի ունենալով, որ ներկայ տարւայ յունուար ամսից ի վեր յեղափոխական կուսակցութիւններից և ոչ մէկին չպատկանող մի չեզոք անձնաւորութիւն բանակցութեան է մտել Արևմտեան Թիւրքիայի հետ՝ Դաշնակցութիւնը և Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութիւնը միացնելու նպատակով, և որ այդ առիթով բանակցութիւններում պատշաճ տեղ է տրուած նաև երկու կողմի ամբաստանեալների համար հիմնելիք մի մասնաւոր դատարանի, — „Դաշնակցութեան Կամքը Ներկայացնող Մարմինը" առաջարկում է Արևմտեան Թիւրքիային մերժել միութեան խնդրից դուրս այս կամ այն անհատի դատարանի խնդրով զբաղուելու առաջարկը։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ